



Forum Réfugiés-ը 1901թ.-ի օրենքի հիման վրա ստեղծված շահույթ չհետապնդող կազմակերպություն է: Այն հիմնադրվել է 1982-ին՝ որպես հասարակական շահերի միություն: Կազմակերպությունը HCR-ի հետ ընկերակցության համաձայնագիր ունի և հանդիսանում է Փախստականների և վտարանդիների Եվրոպական խորհրդի անդամ:

ԱՊԱՍՏԱՆ ՓՆՏՐՈՂՆԵՐԻ Ողջույնի գիրք

Փախստականները պետք է պաշտպանված լինեն

Forum réfugiés, Հոկտեմբեր 2009

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՁԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Այս ձեռնարկը նրանց համար է, ովքեր պատրաստվում են դիմել՝ Ֆրանսիայում ապաստան ստանալու: Նրա նպատակն է ծառայել որպես գործնական ուղեցույց՝ տրամադրելով տեղեկություններ ապաստան ստանալու և դրա հետ կապված սոցիալական նպաստների վերաբերյալ:

Այն մեծ մասամբ օգտակար է **օտարերկրացիների համար, ովքեր արդեն օրինական կամ անօրինական կերպով մուտք են գործել Ֆրանսիա:** Այդքանով իսկ այն չի վերաբերվում սահմանի վրա (սպասման տարածաշրջաններում) կամ վարչական ազատագրկման կենտրոններում կատարված ապաստանի դիմողներին: Մեկուսացված անչափահասների կամ ընտանիքի վերամիավորման գործընթացների մասնավոր դեպքերը նույնպես չեն քննարկվում սույն փաստաթղթում: Այս տեղեկություններին կարող եք ծանոթանալ մեր կայքում՝ www.forumrefugies.org:

Այս ձեռնարկը 2006թ.-ի Դեկտեմբերի հրատարակության նորացումն է և ներառում է այդ ժամանակից ի վեր ընդունված նոր օրենքները և կանոնակարգերը:

Այն բաղկացած է երեք մասից. առաջին մասը ներկայացնում է ապաստանի դիմելու գործընթացը, երկրորդ մասն անդրադառնում է սոցիալական նպաստներին (բնակատեղի, առողջապահություն և ֆինանսական օգնություն) և երրորդ մասը ներառում է կազմակերպությունների և միությունների հասցեներ, որոնք կարող են օգնել ապաստանի դիմելու Ձեր գործընթացի տարբեր փուլերում:

Առաջին երկու բաժինները գործում են ամբողջ Ֆրանսիայի տարածքում, իսկ երրորդ բաժինը վերաբերվում է միայն Լիոնի տարածքին:

Հուսով ենք, որ սույն ձեռնարկը օգտակար կլինի նրանց համար, ովքեր պաշտպանություն են փնտրում Ֆրանսիայում: Մենք երախտապարտ կլինենք սույն ձեռնարկը բարելավելու բոլոր կարծիքների և առաջարկությունների համար:

Ժան Կոստիլ

Forum réfugiés-ի նախագահը

Ալեն Կուդեր

Փաստաբան

Լայոնզ բարի Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ

Ժան-Ֆրանսուա Պլոքուին

Forum réfugiés-ի Տնօրենների խորհրդի անդամ

Զգուշացում

Այս փաստաթղթում ներառված՝ ապաստանի դիմելու գործընթացի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հետևյալ հիմնական փաստաթղթերի շրջանակներում՝

■ Միջազգային փաստաթղթեր

1951թ.-ի հուլիսի 28-ի փախստականների կարգավիճակին վերաբերվող ժնևյան Համաձայնագիր

1967թ.-ի հունվարի 31-ի փախստականների կարգավիճակին վերաբերվող Նյու-Յորքյան Արձանագրություն

1954թ.-ի սեպտեմբերի 28-ի քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակին վերաբերվող Նյու-Յորքյան Արձանագրություն

1950թ.-ի նոյեմբերի 4-ի Մարդու իրավունքների և հիմնական ազատության պաշտպանության Եվրոպական Համաձայնագիր

Դուբլինի II Կանոնակարգ՝ 2003թ.-ի փետրվարի 18-ի Խորհրդի Կանոնակարգ, որը սահմանում է Անդամ Երկրներից որևէ մեկում ժամանակավորապես բնակվող երրորդ երկրի քաղաքացու կողմից ապաստանի դիմումի ուսումնասիրության համար պատասխանատու Անդամ Երկրի որոշման չափանիշները և մեխանիզմները

2004թ.-ի ապրիլի 29-ի Եվրոպական Խորհրդի Հրահանգը 2004/83/EC՝ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի և նրանց՝ որպես փախստական կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող որակելու նվազագույն ստանդարտների, ինչպես նաև ներկայացվող պաշտպանության բովանդակության վերաբերյալ:

Գործընթացի Հրահանգ՝ 2005թ.-ի դեկտեմբերի 1-ի Եվրոպական Խորհրդի Հրահանգը 2005/85/EC՝ Անդամ Երկրներում փախստականի կարգավիճակ շնորհելու կամ դադարեցնելու նվազագույն ստանդարտների վերաբերյալ:

Ընդունման Հրահանգ՝ 2003թ.-ի հունվարի 27-ի Խորհրդի Հրահանգը 2003/9/EC, որը սահմանում էր ապաստան փնտրողների ընդունելության նվազագույն ստանդարտները:

■ Ֆրանսիական փաստաթղթեր

1958թ.-ի հոկտեմբերի 4-ի Սահմանադրություն (ներառյալ 1946թ.-ի հոկտեմբերի 27-ի սահմանադրության նախաբանը)

Օտարերկրացիների մուտք գործելու և մնալու և ապաստանի իրավունքի օրենքը (Code de l'Entrée et du Séjour des Etrangers et du Droit d'Asile (CESEDA) – Volume VII) Մաս VII

Այս ձեռնարկի մասին կարող եք գրուցել մեր կայքում՝
<http://www.forumrefugies.org>

Այն գրել են Forum réfugiés-ի աշխատակիցները՝
Փախստականների Եվրոպական Ֆոնդի աջակցությամբ:
Այն կնորացվի՝ օրենքների և կանոնակարգերի
փոփոխություններին համապատասխան:

**Այս փաստաթուղթը կարող է վերատպագրվել իր բնօրինակի
հիման վրա, եթե նշվեն աղբյուրը և աջակցող կողմերը:**

Բովանդակություն

1 - Պաշտպանության տարբեր տեսակներ

1.1. Փախստականի կարգավիճակը

1.2. Օժանդակ պաշտպանություն

1.3. Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը

2 – Բնակվելու լրացուցիչ լիազորություն՝ Ոստիկանություն

2.1. Անհրաժեշտ փաստաթղթեր

2.2. Բնակվելու լիազորություն

2.3. Այն դեպքերը, երբ բնակվելու լիազորություն չի տրվում

3 – Ապաստանի դիմելը՝ OFPRA և CRR

3.1. OFPRA (*Office Français de Protection des Réfugiés et Apatrides*)

3.1.1. Ինչպես լրացնել OFPRA փայթեթը

3.1.2. Անհրաժեշտ փաստաթղթեր

3.1.3. Փաթեթն ուղարկելը

3.1.4. Ապաստանի դիմելու համար գրանցվելը

3.1.5. “*Récépissé*”

3.1.6. Հարցազրույց OFPRA-ում

3.1.7. OFPRA-ի որոշումը

3.2. CNDA (Փախստականների բողոքարկումների խորհուրդ)

3.2.1 Դիմելու վերջնաժամկետը

3.2.2 Դիմումը

3.2.3 Ձեր դիմումը ստանալու հաստատումը

3.2.4 Իրավաբանական աջակցություն

3.2.5 CNDA-ի լսումը

3.2.6 CNDA-ի որոշումը

3.2.7 Դիմումի գործընթացի ավարտը

4 — Մոցիալական նպաստներ

4.1. Բնակատեղի

4.1.1. Բնակատեղի գիշերային ապաստաններում

4.1.2. Շտապ օգնության բնակատեղի

4.1.3. Բնակատեղիի այլ տեսակներ

4.2. Allocation temporaire d'attente (եկամտի ժամանակավոր օգնություն)

4.3. CMI (անվճար առողջապահական օգնություն)

4.4. Պետական առողջապահական նպաստներ

4.5. Երեխաների սոցիալական իրավունքներ

4.5.1. Երեխայի և ընտանիքի նպաստներ

4.5.2. Առողջապահություն

4.5.3. Կրթություն

5 — Պաշտպանված անձանց իրավունքները

5.1. Պաշտպանությունը Ֆրանսիայում

5.2. Քաղաքացիությունը Ֆրանսիայում

5.3. Ինտեգրվելը Ֆրանսիայում

5.4. Արտասահման ճանապարհորդելը

5.5. Մոտ ընտանիքի անդամների քաղաքացիությունը և պաշտպանությունը

5.6. Աշխատանքի շուկա մուտք գործելը

5.7. Բնակտարածք ունենալու հնարավորությունը

5.8. Առողջապահություն

5.9. Սոցիալական և ընտանիքի նպաստներ

5.10. Քաղաքացիություն ստանալը

6 — OFPRA-ի կողմից վերանայում

7 — Օգտակար հասցեներ

7.1. Փարիզի տարածաշրջան

7.2. Լիոնի տարածաշրջան

8 — Անվտանգ երկրների ցանկ

1— Պաշտպանության տարբեր տեսակներ

Ֆրանսիայում գործում են պաշտպանության երեք տեսակներ՝ փախստականի կարգավիճակ, օժանդակ պաշտպանություն և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակ:

● 1.1. Փախստականի կարգավիճակը

Այս կարգավիճակը կարող է տրվել հետևյալ երեք դեպքերում՝

Հասարակ ապաստան՝ Համաձայն 1951թ.-ի հուլիսի 28-ի Ժնևյան Համաձայնագրի փախստականների կարգավիճակի վերաբերյալ: Այս համաձայնագիրը վերաբերվում է՝

«Ցանկացան անձի (...), ով հիմնավոր կերպով վախենում է կրոնական, ազգային պատկանելության, որոշակի սոցիալական խմբում անդամության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետապնդվելուց, գտվում է իր ազգային պատկանելության երկրից դուրս և ի վիճակի չէ կամ, այդ վախից դրդված, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից»:

Սահմանադրական ապաստան՝ համաձայն 1946թ.-ի Սահմանադրության նախաբանի, որը վերաբերվում է՝ “բոլոր նրանց, ովքեր հետապնդվում են իրենց արարքի համար՝ հօգուտ ազատության”:

Սահմանադրական ապաստանը հետևում է նույն ընթացակարգի կանոններին և առաջարկում է նույն պաշտպանությունը, ինչ հասարակ ապաստանը: Տարբերությունը միայն իրավական հիմքն է: Ապաստանի դիմումը վերանայելու համար պատասխանատու պետական մարմիններն են՝ OFPRA և CNDA (Փախստականների դիմումների խորհուրդը):

▶ **Հասարակ ապաստանի ընթացակարգը գործում է նաև սահմանադրականի դեպքում:**

UNHCR-ի մանդատը՝ Դուք փախստական եք ճանաչվել Փախստականների՝ Միացյալ ազգերի բարձրագույն պատասխանատուի (UNHCR) կողմից՝ համաձայն իր կանոնադրության 6-րդ և 7-րդ հոդվածների:

● 1.2. Օժանդակ պաշտպանություն

Օժանդակ պաշտպանությունը տրվում է «բոլոր նրանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակ ստանալու պայմաններին (...) և ովքեր հաստատում են, որ իրենց երկրում նրանց սպառնում են հետևյալ լուրջ վտանգներից մեկը՝

ա) մահապատիժ,

բ) խոշտանգում կամ անհարդկային կամ ստորացուցիչ պատիժ կամ վերաբերմունք,

գ) քաղաքացու կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող լուրջ, ուղղակի և անհատական վտանգ, որն առաջացել է լոկալ կամ միջազգային ռազմական կոնֆլիկտային իրավիճակի արդյունքում ստեղծված համատարած բռնությունից»:

✦ Ֆրանսիայում փախստականների կարգավիճակը և օժանդակ պաշտպանությունը հաստատվում են OFPRA-ի (*Office Français de Protection des Réfugiés et Apatrides*) կողմից՝ CNDA-ի (Փախստականների բողոքարկումների խորհուրդ) վերահսկողությամբ:

Փախստականների կարգավիճակը և օժանդակ պաշտպանությունը՝ ընթացակարգը նույնն է և Ձեր ապաստանի դիմումը **սկզբում** կքննարկվի փախստականի կարգավիճակ շնորհելու տեսանկյունից և, եթե այն մերժվի, կքննարկվի օժանդակ պաշտպանություն շնորհելու հարցը: Ապաստանի Ձեր դիմումը քննարկելուց հետո OFPRA-ն կտեղեկացնի, թե ինչ տեսակի պաշտպանություն կարող է տրամադրվել Ձեր իրավիճակի դեպքում. փախստականի կարգավիճակի, օժանդակ պաշտպանության կամ դրանցից ոչ մեկի: Եթե Ձեր դիմումը մերժվի, կարող եք բողոքարկել CNDA-ում (Փախստականների բողոքարկումների խորհուրդ):

✦ OFPRA-ն և CNDA-ը (Փախստականների բողոքարկումների խորհուրդ) կարող են հրաժարվել փախստականի կարգավիճակ կամ

օժանդակ պաշտպանություն տրամադրել, եթե գտնեն, որ կարող եք պաշտպանություն ստանալ Ձեր հայրենի երկրի տարածքում:

➤ Դուբլինի Կանտոնակարգի համաձայն՝ Դուք չեք կարող դիմել սպաստան ստանալու Եվրոպական Միության մեկից ավելի երկրներում:

● 1.3. Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը

Այս կարգավիճակը տրվում է նրանց, ում *«ոչ մի այլ երկիր չի համարում իր ազգի ներկայացուցիչ՝ իր օրենսդրության համաձայն»*: Այս կարգավիճակը տարբերվում է մյուս երկու պաշտպանություններից և վերաբերվում է միայն նրանց, ովքեր քաղաքացիություն չունեն: Այս կարգավիճակը հաշվի չի առնում մարդկանց ծննդավայրում հետապնդման ռիսկը:

Կարիք չկա, որ դիմեք Ոստիկանություն: Պետք է գրեք ուղիղ OFPRA-ին՝ նշելով Ձեր անունը, հասցեն և քաղաքացիություն չունեցողի կարգավիճակ ստանալու խնդրանքը:

OFPRA-ից Ձեզ կուղարկեն քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի դիմումի ձևը:

Պետք է լրացնեք ձևը և բացատրեք, թե ինչպես ստացվեց, որ այլևս քաղաքացիություն չունեք:

Դիմումը պետք է վերադարձվի գրանցված առաքման ծառայության կողմից՝ ստացումը տեղյակ պահելով (*lettre recommandée avec avis de réception*):

Այնուհետև Ձեզ կկանչեն OFPRA հարցազրույցի:

■ **Եթե Ձեզ ճանաչել են որպես քաղաքացիություն չունեցող անձ**, OFPRA-ն կտրամադրի քաղաքացիություն չունեցող անձի բնակության թույլտվություն: Ոստիկանությունը Ձեզ, Ձեր կնոջը (եթե ամուսնացած եք եղել նախքան քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստանալը կամ եթե ամուսնացած եք եղել առնվազը մեկ տարի) և 18 տարին չլրացած Ձեր դեռահաս երեխաներին (կամ 16 էթե նրանք ցանկանում են աշխատել) կտրամադրի ժամանակավոր *«vie privée et familiale»* (անձնական կյանք և ընտանիք) բնակության թույլտվություն: Բնակության այս թույլտվությունը վավեր է մեկ տարվա ընթացքում և թույլ է տալիս Ձեզ աշխատել: Այն կնորացվի միայն այն դեպքում, եթե շարունակեք համապատասխանել այն պայմաններին, որոնց ժամանակ այն սկզբնապես տրվել էր:

Վ Ոստիկանությունը կարող է հրաժարվել ժամանակավոր բնակության թույլտվություն տրամադրել, եթե Ֆրանսիայի տարածքում Ձեր գտվելը վտանգ է ներկայացնում հասարակական կարգի խախտման համար:

■ **Եթե OFPRA-ն մերժում է Ձեր դիմումը**, կարող եք բողոքարկել Ձեր տեղի վարչական դատարանում (*Tribunal administratif*)՝ որոշման մասին տեղեկացվելուց հետո երկու ամսվա ընթացքում:

Վ Այն ժամանակաշրջանում, երբ Ձեր դիմումը դեռևս քննարկվում է, ժամանակավոր բնակության թույլտվություն չի տրվում: Հնարավոր է, որ այդ գործընթացի ժամանակահատվածում Ձեզ ետ ուղարկեն Ձեր երկիր: Քաղաքացիություն չունեցող կարգավիճակ ստանալու դիմումների վերանայման արագացված գործընթաց գոյություն չունի: Կարող եք քաղաքացիություն չունեցողի կարգավիճակ ստանալու համար դիմել՝ ապաստանի դիմումի բնակատեղի ունենալուն զուգընթաց:

2— Բնակվելու լրացուցիչ լիազորություն՝ Ոստիկանություն

Պետք է դիմեք Ձեր բնակության վայրի Ոստիկանություն («Préfecture de police» եթե Փարիզում եք բնակվում)՝ բնակվելու թույլտվություն ստանալու համար՝ նախքան ապաստանի համար դիմելը: Այս գործընթացը պարտադիր է բոլոր 18 անց անձանց համար: Այն պայմանական է 16 տարեկանից փոքրերի համար: Պետք է Ոստիկանություն դիմեք ժամանակին: Եթե Ֆրանսիա եք մուտք գործել վիզայով, խորհուրդ ենք տալիս դիմել Ոստիկանություն նախքան Ձեր վիզայի ժամկետի ավարտը:

▶ **Կարող եք ապաստան փնտրել, նույնիսկ եթե Ֆրանսիա եք մուտք գործել անօրեն կերպով:**

Որոշ տեղերում Ոստիկանությունն է որոշում, թե արդյոք պետք է, որ Ձեզ տրվի ժամանակավոր բնակության թույլտվություն՝ Աքուիթեյն (Բորդո), Օվեռն (Կլեոմոն-Ֆեռան), Ստորին Նորմանդիա (Մեն), Բուրգունդիա (Դիժոն), Բոետան (Ռենե), Մենթր (Օռլեան), Շամպայն-Արդեն (Շալոն-է-Շամպայն), Ֆրաշկոտե (Բագանսո), Վերին Նորմանդիա (Ռուն), Լանգուդոկ-Ռուսիլո (Մոնպելե), Լիմուզին (Լիմոզ), Լորեն (Մեց), Միդիպիլեենե (Տուլուզ և Մոնտաբան), Նորդ-Պա-Դե-Վալե (Լիլ), Պե դե լա Լուա (Նանտե), Պիկարդի (Բուվե), Պուատու-Շարենտե (Պուատիե), Պրովանս-Ալպ-Վոդ-Դազուր (Մարսել և Նիս) և Ռոնապլ (Լիոն և Գրենոբլ):

● 2.1. Անհրաժեշտ փաստաթղթեր

Ոստիկանությունը Ձեզ կտրամադրի ժամանակավոր բնակության թույլտվության դիմումի համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ցանկը:

Պետք է ներկայացնեք հետևյալը՝

1 – Անձնագրի չորս լուսանկար

2 – Ձեր քաղաքացիական կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

▶ ***Կարող եք ապաստանի համար դիմել, նույնիսկ եթե անձնագիր, վիզա կամ ինքնությունը հաստատող փաստաթղթեր չունեք: Այդ դեպքում պետք է գրավոր արձանագրեք Ձեր քաղաքացիական կարգավիճակը:***

3 – Տեղեկություններ պայմանների մասին, թե ինչպես եք մուտք գործել Ֆրանսիա, և Ձեր երթուղին՝ սկսած հայրենի երկրից:

4 – Բնակատեղի ապացույց՝ Ոստիկանությունը պետք է հասցե ունենա, որով հնարավոր կլինի Ձեզ տեղեկություններ ուղարկել ապաստանի դիմումի և Ֆրանսիայում Ձեր գտնվելու վերաբերյալ: Պարտադիր չէ, որ այդ հասցեն Ձեր բնակության հասցեն լինի: Եթե հաստատուն բնակատեղի չունեք, կարող եք տրամադրել անհատ անձի, հյուրանոցի կամ փաստաբանի հասցե: Կարող եք նաև որևէ միության հասցե տալ, բայց միայն այն դեպքում, եթե այն հաստատվել է Ոստիկանության կողմից: Սակայն **հենց որ Ձեր եռամսյա “*récépissé*”-ը ավարտվի, Դուք ստիպված կլինեք բնակության ապացույց ներկայացնել՝ նորացում խնդրելու համար:** Այս բնակության ապացույցը պետք է լինի այն բնակատեղի հասցեն, որտեղ ապրում եք: Այլապես Ձեր “*récépissé*”-ը չի նորացվի: Եթե հիմնական հասցե չունեք,

կարող էք շարունակել նշել պայմաններին բավարարող միության հասցեն:

Բոլոր դեպքերում ներկայացված հասցեն պետք է տեղակայված լինի այն *département*-ում, որտեղ դիմել էք ապաստան ստանալու:

Պետք է տեղյակ պահեք Ոստիկանությանը ամեն անգամ, երբ Ձեր հասցեն փոփոխվի՝ ապաստանի գործընթացի ամբողջ ժամանակահատվածում:

▶ *Ոստիկանությունը չի կարող հարցնել այն պատճառների մասին, որոնց համար դիմել էք ապաստան ստանալու, քանզի դա միայն OFPRA-ի և CNDA-ի իրավունքն է:*

● 2.2. Բնակվելու թույլտվություն

▶ *Ոստիկանությունը Ձեզնից մատնահետքեր կվերցնի ստուգելու համար, թե արդյոք մեկ այլ Եվրոպական երկրում գրանցվել էք՝ նախքան Ֆրանսիա գալը:*

▶ *Ոստիկանությունը, որտեղ Դուք դիմել էք, կարող է մեկ այլ *département*-ի անունից բնակության թույլտվություն տրամադրել:*

Եթե Ոստիկանությունը բնակության թույլտվություն տրամադրի, Ձեզ կտրվի՝

- Մեկ ամսյա “*Autorisation Provisoire de Séjour*” (APS): Այս ժամանակավոր բնակության թույլտվությունը պետք է տրվի Ոստիկանության կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո 15 օրվա ընթացքում:

- Ապաստանի դիմումի ձև, որը պետք է լրացվի և **ուղարկվի OFPRA 21 օրվա ընթացքում:**

▶ Ապաստանի դիմելու Ձեր ամբողջական փաթեթը պետք է OFPRA հասնի 21 օրվա ընթացքում: Եթե փաթեթը ներկայացվի սույն վերջնաժամկետից հետո, Ձեր դիմումը չի գրանցվի և այն ետ կվերադարձվի OFPRA-ի կողմից: Սա կարող է նշանակել, որ այլևս չէք կարող դիմել ապաստան ստանալու: 21-օրյա ժամանակահատվածը սկսվում է Ձեր APS-ում նշված ամսաթվից:

✚ Եթե OFPRA-ն չի գրանցում Ձեր ապաստանի դիմումը, պետք է ևս մեկ անգամ դիմեք Ոստիկանություն ապաստանի վրա հիմնված բնակության համար՝ բացատրելով, թե ինչու չէր դիմումն ընդունվել վերջնաժամկետից առաջ: Կարող եք նաև բողոքարկել՝ OFPRA-ի կողմից վերանայելու:

Խորհուրդ ենք տալիս կապվել որևէ միության հետ՝ այս գործընթացներում աջակցության համար:

● 2.3. Այն դեպքերը, երբ բնավելու թույլտվություն չի տրվում

CESEDA-ի L.741-4 հոդվածի համաձայն՝ **Ոստիկանությունը կարող է մերժել APS տրամադրել չորս դեպքերում՝**

■ **Դուք համապատասխանում եք Դուբլինի Կանոնակարգի պայմաններին:** Մեկ այլ Եվրոպական երկիր պետք է քննի ապաստան ստանալու Ձեր դիմումը, եթե ճանապարհորդել եք **Դուբլինի Կանոնակարգը** ստորագրած մեկ այլ Եվրոպական երկրի միջով (Ավստրիա, Բելգիա, Կիպրոս, Չեխական Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Սալթա, Նիդեռլանդներ, Նոլանդիա, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա և Շվեյցարիա՝ 2008թ.-ի դեկտեմբերից հետո) կամ եթե այդ պետական մարմիններից որևէ մեկի կողմից տրված վիզա ունեք:

Ոստիկանությունը կկապվի քննարկվող երկրի պետական մարմինների հետ և Ձեր գործի փոխանցում կպահանջվի տվյալ երկիր: Ձեզ փաստաթուղթ կտրվի, որը կօրինականացնի Ֆրանսիայում Ձեր

գտնվելը՝ նախքան այդ երկրից պատասխանը ստանալը: Եթե տվյալ երկիրը հրաժարվի Ձեզ ընդունել, Ոստիկանությունը կարող է Ձեզ ձերբակալելու որոշում ընդունել և Դուք կմնաք վարչական ազատագրկման կենտրոնում մինչև արտաքսումը:

Եթե տվյալ երկիրը հրաժարվի Ձեզ ետ վերցնել, թույլ կտրվի, որ ժամանակավորապես բնակվեք Ֆրանսիայում և ապաստան ստանալու դիմում ներկայացնեք, որը կքննարկվի ստանդարտ ընթացակարգով:

■ **Դուք ապահով երկրների ցանկից որևէ երկրի քաղաքացի եք:** Դուք այն երկրներից մեկի քաղաքացին եք, որոնց OFPRA-ն ընդհանուր առմամբ համարում է հետապնդման ռիսկից ազատ, կամ այն երկրներից մեկի քաղաքացին եք, որոնց OFPRA-ի խորհուրդը **համարում է անվտանգ:** 2005թ.-ի հունիսի և 2006թ.-ի մայիսի ցանկի երկրներն են՝ Բենին, Բոսնիա-Հերցոգովինան, Կաբո Վերդե կղզիները, Խորվաթիան, Վրաստանը, Գանան, Հնդկաստանը, Մակեդոնիան, Մադագասկարը, Մալին, Մաուրիթիուսը, Մոնղոլիան, Սենեգալը, Տանզանիան և Ուկրաինան:

➤ **Կարող եք նաև Ոստիկանության միջոցով Ձեր գործը հանձնել OFPRA, որը ապաստանի դիմումի ձև կտրամադրի Ձեզ: Այնուհետև Ձեր գործը կքննարկվի արագացված ընթացակարգով:** Դուք 15 օր կունենաք ապաստանի դիմումը Ոստիկանություն ներկայացնելու համար, որը պետք է լինի ստորագրված և ամբողջական և տեղադրված լինի կնքված ծրարում: Ոստիկանությունը չի կարող կարդալ ապաստանի Ձեր դիմումը/ կից փաստաթղթերը, քանի որ դրանք գաղտնի են: Ոստիկանությունը, ապաստանի Ձեր դիմումը ստանալուն պես, այն փոխանցում է OFPRA՝ նշելով, որ այն արագացված ընթացակարգի դիմում է: Ապաստանի Ձեր դիմումին ավելի առաջնային նշանակություն կտրվի: OFPRA-ն որոշում կկայացնի 15 օրվա ընթացում Եթե OFPRA-ն մերժի Ձեր դիմումը, կարող եք բողոքարկել CNDA-ում: Սակայն, եթե Ոստիկանությունը որոշում կայացնի ետ ուղարկել Ձեզ Ձեր երկիր, այս բողոքարկումը հնարավոր կլինի կրկնել:

■ **Ձեր ներկայությունը Ֆրանսիայում լուրջ վտանգ է ներկայացնում** օրենքի և կարգի, հասարակական անվտանգության կամ երկրի ապահովության համար: Ընթացակարգը նույնն է, ինչ որ նախորդ դեպքում:

■ Ձեր դիմումը կարող է համարվել կեղծված (օրինակ եթե ապաստանի մի քանի դիմում ներկայացնեք տարբեր ինքնության փաստաթղթերով) կամ սխալ (օրինակ եթե դիմեք ապաստանի համար՝ վտարման մասին տեղեկացվելուց կամ ձերբակալվելուց հետո, նույնիսկ եթե Ֆրանսիայում եք եղել որոշակի ժամանակ): Ընթացակարգը նույնն է, ինչ որ նախորդ երկու դեպքերում:

3— Ապաստանի դիմելը՝ OFPRA և CNDA

Ձեզ ապաստանի դիմում է տրվել Ոստիկանության կողմից:

● 3.1. OFPRA

3.1.1. Ինչպես լրացնել OFPRA փաթեթը

- Փաթեթը պետք է լրացվի ֆրանսերեն:
- Ձեր հասցեն պետք է ընթեռնելի լինի:
- Պետք է ճշգրիտ կերպով լրացնեք Ձեր անձնական և ընտանիքի կացության վերաբերյալ բոլոր բաժինները:
- Պետք է ուշադիր լինեք Ձեր խոսակցական լեզուն(ները) նշելիս: Պետք է նշեք միայն այն լեզուն(ները), որոնցով սահուն եք խոսում, քանի որ դրանք կարող են գործածվել հարցազրույցի ժամանակ:
- OFPRA ձևի մաս 15-ը նախատեսված է, որ բացատրեք, թե ինչու եք ապաստան խնդրում: Պետք է անձնական պատմություն գրեք՝ ներառելով կոնկրետ ամսաթվեր և տեղեր, ինչպես նաև փաստեր, որոնք ստիպել են Ձեզ լքել երկիրը և նշեք, թե ինչու չեք կարող վերադառնալ այնտեղ: Խորհուրդ է տրվում անպայման հարցազրույց խնդրել OFPRA-ում:

▶ *Չմոռանաք ստորագրել և նշել ամսաթիվը Ձեր փաթեթի վրա, այլապես այն չի գրանցվի OFPRA-ի կողմից (անչափահասների փոխարեն պետք է ստորագրեն օրինական ներկայացուցիչները):*

3.1.2. Անհրաժեշտ փաստաթղթեր *Ձեր փաթեթը պետք է ներառի՝*

- Ձեր վավեր բնակության թույլտվության (APS) պատճենը
- Անձնագրի 2 նկար

- Բոլոր ինքնությունը հաստատող կամ ճանապարհորդային փաստաթղթերի բնօրինակները (անձնագիր, ազգային ինքնության քարտ, անցաթուղթ, ծննդյան վկայական և այլն)

▶ Համոզվեք, որ լրացրել եք OFPRA ձեռնարկ 5-ը այն փաստաթղթերի մասին, որոնք պետք է կցվեն (կամ բացատրեք այդ փաստաթղթերի բացակայությունը):

- Ապաստանի համար դիմումի օժանդակ փաստաթղթեր, եթե այդպիսիք կան:

Կարիք չկա, որ ներառեք նաև այս փաստաթղթերի թարգմանությունները:

▶ **Նախքան Ձեր փաթեթը OFPRA ուղարկելը (կամ Ոստիկանություն ներկայացնելը, եթե Ձեզ առաջնայություն ունեցող գործընթաց է շնորհվել), համոզվեք, որ այն լրացվել է ցուցումներին համապատասխան և որ պահանջվող փաստաթղթերը կցվել են: Եթե Ձեր փաթեթն ամբողջական չէ, այն OFPRA-ի կողմից էտ կվերադարձվի: Ապաստանի Ձեր դիմումը չի կարող գրանցվել, եթե Ձեր փաթեթն ամբողջական չէ: Մինչև Ձեր փաթեթը տեղ կհասնի, վերջնաժամկետը կարող է անցնել, որի դեպքում փաթեթը նորից էտ կվերադարձվի: Արդյունքում՝ Դուք կրկին չեք կարողանա դիմել ապաստանի համար:**

▶ **Եթե OFPRA-ն չի գրանցում Ձեր ապաստանի դիմումը, պետք է ևս մեկ անգամ դիմեք Ոստիկանություն ապաստանի վրա հիմնված բնակության համար՝ բացատրելով, թե ինչու չէր դիմումն ընդունվել վերջնաժամկետից առաջ: Կարող եք նաև բողոքարկել՝ OFPRA-ի կողմից վերանայելու: Ցանկալի է, որ որևէ միություն աջակցի այս գործընթացի ժամանակ:**

3.1.3. Փաթեթն ուղարկելը

Եթե Ձեզ ժամանակավոր բնակության թույլտվություն է տրվել, OFPRA-ն պետք է ստանա փաթեթը Ձեր կողմից APS-ը ստանալուց հետո 21 օրվա ընթացքում: Եթե փաթեթն ուղարկում եք փոստով, խորհուրդ է տրվում ուղարկել գրանցված փոստով՝ ստացումը հաստատելով (*recommandé avec accusé de réception*) և ընթեռնելի կերպով նշելով Ձեր անունը ուղարկողի (*expéditeur*) բաժնում: Եթե Ձեր հասցեն միության

կամ անհատ անձի հասցե է, չմոռանաք գրել նաև նրանց անունը հասցեի հետ մեկտեղ:

Պահպանեք բոլոր փաստաթղթերի ապացույցները: Կարող եք Ձեր փաթեթը հանձնել նաև OFPRA-ի ընդունարանում: Պահպանեք ապաստանի դիմումի, ինչպես նաև OFPRA ուղարկած բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները (այդ թվում OFPRA ձևը):

▶ *Գործընթացի ամբողջ ընթացքում, մինչև OFPRA-յի կողմից Ձեր դիմումի վերաբերյալ որոշում կայացնելը, կարող եք ուղարկել Ձեր փաթեթի լրացուցիչ մասերը: Չմոռանաք նշել Ձեր գործի համարը ամեն անգամ, երբ գրում եք OFPRA, այս համարը նշված է ‘enregistrement d’une demande d’asile’ փաստաթղթում:*

3.1.4. Ապաստանի դիմելու համար գրանցվելը

Եթե Ձեր փաթեթն ամբողջական է, OFPRA-ն կուղարկի “*enregistrement d’une demande d’asile*” փաստաթուղթը փաթեթում նշված հասցեով: Այս փաստաթուղթը պաշտոնապես հաստատում է, որ ապաստանի դիմումը գրանցվել է:

Պահպանեք այս փաստաթուղթն ապահով տեղում, քանզի լրացուցիչ օրինակներ չեն տրվելու:

3.1.5. “*Récépissé*”

Եթե Դուք APS ունեք, պետք է նախքան մեկամսյա APS-ի վերջնաժամկետը ստացած լինեք ապաստանի դիմումի գրանցումը հաստատող փաստաթուղթը: Այն ներկայացրեք Ոստիկանություն՝ որպես հասցեի նոր ապացույց: 3 օրվա ընթացքում Ոստիկանությունը փաստաթուղթ կուղարկի՝ տեղեկացնելով, որ ապաստանի դիմումը ներկայացվել է (*récépissé constatant le dépôt d’une demande d’asile*): Այս փաստաթուղթը ուժի մեջ կլինի 3 ամսվա ընթացքում և կարող է նորացվել դիմումի գործընթացի ամբողջ ժամանակահատվածում:

Ձեր բնակության հասցեի ապացույցը պետք է ներկայացվի առաջին նորացման համար և դրանից հետո, այլապես “*récépissé*”-ը չի նորացվի: Եթե հիմնական հասցե չունեք, կարող եք շարունակել նշել պայմաններին բավարարող միության հասցեն:

“*Récépissé*”-ը թույլ չի տալիս Ձեզ աշխատել:

3.1.6. Հարցազրույց OFPRA-ում

OFPPRA-ն պարտավոր է Ձեզ հարցազրույցի հրավիրել՝ բացառությամբ հետևյալ 4 դեպքերում՝

■ Ձեր փաթեթում ներառված փաստաթղթերը բավարար են, որ OFPPRA-ն որոշում կայացնի:

■ Դուք մի երկրի քաղաքացի եք, որը OFPPRA-ը համարում է ընդհանուր առմամբ հետապնդման ռիսկից ազատ:

■ Ապաստանի դիմումին կցված Ձեր փաստաթղթերը «ակնհայտորեն անհիմն» են. դա նշանակում է, որ ապաստանի Ձեր դիմումում նշված պատճառները բացահայտ կերպով չեն համապատասխանում պաշտպանության ստանալու կարգավորման կանոններին կամ ապաստանի Ձեր դիմումի պատճառները բավարար կերպով բացատրված չեն:

■ Ձեք կարող մասնակցել հարցազրույցին առողջական պատճառներով:

Այսպիսի իրավիճակներում OFPPRA-ն կարող է որոշում կայացնել՝ առանց լսելու գործը Ձեր ներկայացմամբ:

Եթե Ձեզ կանչ է տրվել OFPPRA-ի կողմից, ուրեմն Ձեզ կլսի պաշտպանության աշխատակիցը OFPPRA-ի գլխամասային գրասենյակում, Փարիզում: OFPPRA-ն թարգմանիչ կներկայացնի այն լեզվի համար, որը ապաստանի դիմումում նշել եք որպես խոսակցական լեզու:

▶ *Հարցազրույցին չներկայանալը բացասական հետևանքներ կունենա ապաստանի Ձեր դիմումի համար:*

▶ *Հասցեի փոփոխության դեպքում, պետք է անմիջապես փոստով տեղեկացնեք OFPPRA-ին, ցանկալի է գրանցված փոստով՝ ստացումը հաստատելով (recommandé avec accuse de réception): OFPPRA-ն փոստով կտեղեկացնի Ձեզ իր որոշման վերաբերյալ՝ վերջին նշված հասցեով: Պահպանեք Ձեր հասցեի փոփոխության մասին տեղեկացնող նամակի կրկնօրինակը, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի կրկնօրինակները, որոնք ստացել կամ ուղարկել եք փոստով:*

3.1.7. OFPPRA-ի որոշումը

OFPPRA-ի կողմից որոշում կայացնելու ժամանակաշրջանը տարբեր կարող է լինել: Այն կարող է շատ երկար տևել կամ երբեմն կայացվել շատ արագ: Պետք է ուշադիր լինեք և շատ հաճախ ստուգեք փոստը:

Երեք հնարավոր որոշումներ կարող են լինել՝

- Ձեզ ճանաչել են որպես փախստական (փախստականի կարգավիճակ է շնորհվում):
- Ձեզ օժանդակ պաշտպանություն է շնորհվել (փախստականի կարգավիճակը մերժվում է և շնորհվում է օժանդակ պաշտպանություն)
- Ապաստանի Ձեր դիմումը մերժվել է (փախստականի կարգավիճակը և օժանդակ պաշտպանությունը մերժվում են)

■ **Եթե ճանաչվել եք որպես փախստական**, OFPRA-ն Ձեզ կուղարկի “*décision d’admission au statut de réfugié*”: Փախստականի կարգավիճակի այս ապացույցը ներկայացրեք Ոստիկանություն, որը Ձեզ 8 օրվա ընթացքում “*récépissé*” կտա բնակության թույլտվության դիմումի համար: Այն վավեր է 3 ամսվա ընթացքում և թույլ է տալիս աշխատել, մինչև կստանաք **10 տարվա բնակության թույլտվությունը (օրենքով նորացման ենթակա)**: Կարգը նույնն է նաև Ձեր կողակցի (եթե ամուսնությունը կայացել է փախստականի կարգավիճակ ստանալուց առաջ կամ առնվազն մեկ տարի առաջ կամ եթե Ձեր կողակցը նույնպես ստացել է փախստականի կարգավիճակ) և 18 տարեկանը չլրացած Ձեր դեռահաս երեխաների համար (կամ 16, եթե ցանկանում են աշխատել): Պահանջելու դեպքում Ոստիկանությունը կարող է ճանապարհորդելու փաստաթղթեր տրամադրել, որոնք թույլ կտան Ձեզ ճանապարհորդել բոլոր երկրներում՝ բացառությամբ Ձեր ծննդավայրը: Այնուհետև OFPRA-ն կլինի այն վարչական պաշտոնական մարմինը, որը քաղաքացիական կարգավիճակի հավաստագրեր կտրամադրի, որոնք Դուք այլևս չեք կարող ստանալ Ձեր ծննդավայրից:

▶ **Եթե ետ վերադառնաք Ձեր ծննդավայր կամ վերահաստատեք Ձեր երկրի հետ դիվանագիտական կամ հյուպատոսական կապերը, փախստականի կարգավիճակը կորցնելու ռիսկի կդիմեք:**

▶ **Ոստիկանությունը կարող է հրաժարվել տրամադրել Ձեր ժամանակավոր բնակության թույլտվությունը, եթե Ֆրանսիայի տարածքում Ձեր գտնվելը վտանգ է ներկայացնում հասարակական կարգի խախտման համար:**

Տես ձեռնարկի մաս 5-ը՝ պաշտպանված անձանց իրավունքներին ծանոթանալու համար:

Եթե Ձեզ օժանդակ պաշտպանություն է շնորհվել, OFPRA-ն նամակ կողարկի՝ տեղեկացնելով, որ Դուք շահում եք այս պաշտպանությունից: Այս փաստաթուղթը պատրաստելիս՝ Ոստիկանությունը *“récépissé”* կտրամադրի՝ եռամսյա բնակության թույլտվության դիմելու համար, որը թույլ կտա Ձեզ աշխատել, մինչև կստանաք **Ժամանակավոր միամյա “vie privée et familiale” բնակության թույլտվություն:** Կարգը նույնն է նաև Ձեր կողակցի (եթե ամուսնությունը կայացել է օժանդակ պաշտպանություն ստանալուց առաջ կամ առնվազն մեկ տարի առաջ կամ եթե Ձեր կողակցը նույնպես ստացել է փախստականի կարգավիճակ) և 18 տարեկանը չլրացած Ձեր դեռահաս երեխաների համար (կամ 16, եթե ցանկանում են աշխատել): Բնակության թույլտվությունը թույլ է տալիս աշխատել և կարող է նորացվել, քանի դեռ օժանդակ պաշտպանություն ստանալու պատճառները դեռևս գործում են:

OFPRA-ն գտնում է, որ Դուք այլևս չեք կարող դիմել Ձեր ծննդավայրի պաշտոնական մարմիններին՝ անձնագիր ստանալու համար, սակայն կարող եք դիմել Ոստիկանություն՝ բոլոր երկրներում ճանապարհորդելու փաստաթղթեր ստանալու համար՝ Ձեր ծննդավայրից բացի: Այս դեպքում OFPRA-ն կլինի այն վարչական պաշտոնական մարմինը, որը քաղաքացիական կարգավիճակի հավաստագրեր կտրամադրի, որոնք Դուք այլևս չեք կարող ստանալ Ձեր ծննդավայրից:

Այլապես, պետք է շարունակեք կապվել Ձեր երկրի մարմինների հետ այդ տեսակի հարցերի կապակցությամբ:

➤ Ոստիկանությունը կարող է հրաժարվել տրամադրել Ձեր ժամանակավոր բնակության թույլտվությունը, եթե Ֆրանսիայի տարածքում Ձեր գտվելը վտանգ է հանդիսանում հասարակական կարգի խախտման համար:

Տես ձեռնարկի մաս 5-ը՝ պաշտպանված անձանց իրավունքներին ծանոթանալու համար:

■ Եթե ապաստանի Ձեր դիմումը մերժվի OFPRA-ի կողմից (փախստականի կարգավիճակ և/կամ օժանդակ պաշտպանություն), կարող եք բողոքարկել որոշումը CNDA-ում մեկ ամսվա ընթացքում: Մերժման մասին տեղեկացնելու հետ մեկտեղ, OFPRA-ն կկցի նաև

պաշտպանության աշխատակցի կողմից հարցազրույցի ժամանակ վերցված նշումները:

Չ՝ Եթե Ձեզ ժամանակավոր բնակության թույլտվություն չի տրվել և տեղափոխվել եք արագացված ընթացակարգին, կարող եք մնալ Ֆրանսիայում մինչև OFPRA-ի որոշման մասին տեղեկացվելը: Ոստիկանությունը կարող է որոշում կայացնել արտաքսել Ձեզ՝ համաձայն OQTF-ի (*Obligation de quitter le territoire français* – Ֆրանսիայի տարածքը լքելու հրաման) կամ APRF-ի (*Arrêté préfectoral de reconduite à la frontière* – Արտաքսման Ոստիկանական հրաման), նույնիսկ եթե բողոքարկել եք CNDA-ում:

Ը՝ Եթե չբողոքարկեք CNDA-ում, կարող եք գրկվել բնակության թույլտվությունից: Ոստիկանությունը մեկ ամսվա ընթացքում OQTF (Ֆրանսիայի տարածքը լքելու հրաման) կներկայացնի:

● 3.2. CNDA

(Փախստականների բողոքարկումների խորհուրդ)

OFPRA-ի կողմից Ձեր դիմումի մերժումը Ձեզ է ուղարկվում գրանցված փոստով Ձեր կողմից վերջին նշած հասցեով՝ ստացումը հաստատելով: Դրա հետ միասին ուղարկվում են նաև հարցազրույցի նշումները:

3.2.1. Բողոքարկման վերջնաժամկետը

Դուք ունեք մեկ ամիս OFPRA-ի մերժման ծանուցումն ստանալուց ի վեր՝ դիմելու CNDA-ում բողոքարկման (օրինակ՝ եթե դիմումի մերժումը փոստային գրասենյակից վերցրել եք հունվարի 20-ին, CNDA-ում Ձեր բողոքարկումը պետք է գրանցված լինի նախքան փետրվարի 21-ը): Այդ պատճառով պետք է բողոքարկումն ուղարկեք վերջնաժամկետից մի քանի օր առաջ: Այս մեկամսյա վերջնաժամկետից հետո Ձեր բողոքարկումը կհամարվի անընդունելի. դա նշանակում է, որ այն կմերժվի առանց քննարկման:

Չ՝ Եթե տանը չեք կամ օգտվում եք միության հասցեից, փոստային գրասենյակը նամակի ստացման ծանուցում կթողնի (*avis de passage du facteur*): Փոստային գրասենյակը պահպանում է նամակը 15 օր: Եթե 15 օրվա ընթացքում չկարողանաք վերցնել Ձեր նամակը, փոստային գրասենյակն այն կվերադարձնի OFPRA: Այս դեպքում մեկամսյա

վերջնաժամկետը կհաշվարկվի փոստային գրասենյակի ծանուցման մեջ նշված ամսաթվից:

3.2.2. Բողոքարկում

- Ձեր բողոքարկումը պետք է գրված լինի ֆրանսերեն լեզվով դատարկ թղթի վրա (ստույգ ձևեր գոյություն չունեն), ներառյալ ամբողջական անունը, քաղաքացիական կարգավիճակը, մասնագիտությունը և հասցեն:
- Ձեր բողոքարկմանը պետք է կցեք OFPRA-ի որոշման բնօրինակը կամ պատճենը:
- Պետք է բացատրեք, թե ինչու համաձայն չեք OFPRA-ի մերժման պատճառի հետ: Բացատրեք, թե ինչու եք լքել Ձեր երկիրը և ինչու չեք կարող ետ վերադառնալ: Եթե OFPRA-ից Ձեզ կանչ չի տրվել, կարող եք այդ մասին նշել բողոքարկման մեջ: Պետք է բավարար բացատրություններ ներկայացնեք Ձեր բողոքարկման պատճառների վերաբերյալ, որպեսզի այն անհիմն չհամարվի: Այդ դեպքում CNDA-ը կարող է մերժել բողոքարկումն առանց այն քննարկելու, այսինքն՝ առանց լսման:
- Պետք է կցեք Ձեր ինքնությունը, քաղաքացիությունը հաստատող և Ձեր պնդումն ապացուցող բոլոր փաստաթղթերը: Նախընտրելի է, որ բողոքարկման հետ նաև ուղարկեք այս փաստաթղթերի կրկնօրինակները՝ բնօրինակները ներկայացնելով CNDA-ի լսման ժամանակ: Այս փաստաթղթերը պետք է թարգմանվեն ֆրանսերեն: Եթե դրանք թարգմանված չեն, CNDA-ը չի կարողանա դրանք օգտագործել: Պարտադիր չէ, որ օժանդակ փաստաթղթերը թարգմանված լինեն երդվյալ թարգմանչի կողմից:
- Պետք է ստորագրեք բողոքարկումը: Եթե անչափահաս եք, Ձեր ծնողներից որևէ մեկը կամ Ձեր օրինական ներկայացուցիչը պետք է այն ստորագրի:
- Ձեր բողոքարկումը պետք է ուղարկվի գրանցված փոստով՝ ստացումը հաստատելով (*recommandé avec accusé de réception*):

✚ Ապահով տեղում պահեք Ձեր նամակը փոստով ուղարկելու և ստանալու փաստաթղթերը:

✚ Պահպանեք բողոքարկման Ձեր բոլոր փաստաթղթերի ֆոտոկրկնօրինակները:

✚ Հասցեի ցանկացած փոփոխության դեպքում տեղեկացրեք CNDA-ին՝ նշելով Ձեր բողոքարկման համարը (տես ներքևում):

✚ Կարող եք լրացուցիչ տեղեկություններ տրամադրել CNDA-ին Ձեր լսումից նախքան երեք օր ժամանակահատվածում:

3.2.3. Ձեր դիմումը ստանալու հաստատումը

Բողոքարկումն ստանալուն պես CNDA-ը Ձեզ կուղարկի *accusé de réception du recours* (Ձեր բողոքարկումը ստանալու հաստատումը) կոչվող փաստաթուղթ՝ Ձեր կողմից նշված հասցեով: Այս փաստաթուղթը հաստատում է, որ բողոքարկումը գրանցվել է: Սա է այն փաստաթուղթը, որը պետք է ցույց տաք Ոստիկանությունում՝ Ձեր “*récépissé*”-ը 3 ամսով նորացնելիս: Եթե նորից կապվեք CNDA-ի հետ, չմոռանաք նշել Ձեր բողոքարկման ստացումը հաստատող փաստաթղթում նշված գրանցման համարը:

Միննույն ժամանակ CNDA-ը Ձեզ նաև կուղարկի մի փաստաթուղթ, որտեղ պետք է նշեք այն լեզուները, որոնցով խոսում եք, որպեսզի հնարավոր լինի դրանք օգտագործել լսման ժամանակ:

▶ Եթե Ձեր “*récépissé*”-ի ժամկետն ավարտվում է նախքան բողոքարկումն ստանալու հաստատման ստացումը, խորհուրդ է տրվում պահպանել Փոստային գրասենյակի գրանցված առաքման թուղթը՝ որպես Ձեր կարգավիճակի ապացույց:

3.2.4. Օրենսդրական աջակցություն

CNDA-ում լսման ժամանակ Ձեզ կարող է օգնել փաստաբանը: Կարող եք ինքներդ ընտրել Ձեր փաստաբանին և վճարել տուրքերը կամ օգտվել օրենսդրական աջակցության փաստաբանի ծառայություններից (*aide juridictionnelle*):

Կարող եք փաստաբան խնդրել, որը զբաղվում է օրենսդրական աջակցության գործերով, և ծախսը ամբողջությամբ կամ մասամբ կհատուցվի պետության կողմից: Դրա համար պետք է կապվեք **CNDA-ի օրենսդրական աջակցության գրասենյակի հետ (BAJ, Bureau de l'aide juridictionnelle)**: Կարող եք փաստաբան ընտրել և BAJ-ը կնշանակի նրան: 2008թ.-ի դեկտեմբերի 1-ից սկսած՝ Դուք այլևս ստիպված չեք ապացույց ներկայացնել, որ օրինական կերպով եք մուտք գործել Ֆրանսիա (վիզա, սպասման տարածաշրջանում տրված ապահով վարքի փաստաթուղթ և այլն):

Այնուամենայնիվ, Դուք պետք է համապատասխանեք մյուս երկու պայմաններին՝

- Ձեր միջոցները չպետք է գերազանցեն որոշակի մեծությունը:
- Ձեր բողոքարկումը չպետք է ակնհայտորեն ստացման ենթակա չլինի կամ լինի անհիման:

Խորհուրդ է տրվում խորհրդատվություն ստանալ որևէ միությունից՝ ժամանակացույցի մասին լրացուցիչ տեղեկությունների համար:

3.2.5. CNDA-ի լսումը

Եթե Փախստականների բողոքարկումների խորհուրդը ստացման ենթակա համարի Ձեր բողոքարկումը, Ձեզ լսման ներկայանալու կանչ կտրվի: Կանչը Ձեզ կուղարկվի փոստով լսման ամսաթվից առնվազն մեկ ամիս առաջ:

CNDA երդվյալների հանձնաժողովը բաղկացած է երեք անձանցից՝ նախագահ (դատավոր), UNHCR-ի (Փախստականների՝ Միավորված Ազգերի Բարձրագույն Պատասխանատու) կողմից նշանակված որակավորված անձ և Բարձրագույն դատարանի փոխնախագահի կողմից նշանակված որակավորված անձ: CNDA երդվյալների հանձնաժողովը կքննի Ձեր բողոքարկման գործը *rapporteur*-ի ներկայությամբ, երբ կկարդացվի Ձեր ապաստանի դիմումի ամփոփ նկարագրությունը և կառաջարկվի որևէ լուծում, ինչպես նաև կլսեն գործը Ձեր փաստաբանի ներկայացմամբ (եթե փաստաբան ունեք) և որոշ հարցեր կտրվեն Ձեզ:

CNDA-ը անպայման բանավոր թարգմանիչ կապահովի՝ թարգմանելու համար այն լեզվից, որը նշել եք OFPRA ձևում կամ որը նշված էր CNDA-ի կողմից բողոքարկման ստանալու հաստատման հետ միասին ուղարկված փաստաթղթում:

Լսման ժամանակ Ձեր ներկայությունը խստորեն խրախուսվում է: Լսումը բաց է հասարակության համար, սակայն կարող եք նաև մասնավոր լսում խնդրել՝ առանց հասարակության ներկայության:

▶ *Հիշեցում՝ CNDA-ի նախագահը կարող է որոշում կայացնել մերժել Ձեր բողոքարկումը՝ առանց հրավիրելու Ձեզ լսմանը, եթե բողոքարկումը OFPRA-ի որոշումը կասկածի տակ առնելու բավարար հիմքեր չունի:*

3.2.6. CNDA-ի որոշումը

CNDA-ը ներառում է իր որոշումները (չեղյալ հայտարարելը/ մերժումը) հրապարակումների մեջ և Ձեզ է ուղարկում դրանք գրանցված առաքումով՝ ստացումը հաստատելով, լսումից սովորաբար երեք շաբաթվա ընթացքում: Հնարավոր են հետևյալ դեպքերը՝

■ CNDA-ը չեղյալ է հայտարարում Ձեր դիմումը մերժելու OFPRA-ի որոշումը և շնորհում է փախստականի կարգավիճակ: Ձեզ կտրվեն բոլոր իրավունքները, որոնք կտրվեին, եթե փախստական ճանաչվեիք OFPRA-ի կողմից:

Տես ձեռնարկի մաս 5-ը՝ պաշտպանված անձանց իրավունքներին ծանոթանալու համար:

■ CNDA-ը չեղյալ է համարում OFPRA-ի որոշումը և շնորհում է Ձեզ օժանդակ պաշտպանություն: Դուք ձեռք եք բերում նույն իրավունքները, ինչ որ կստանայիք, եթե պաշտպանությունը տրվեր OFPRA-ի կողմից:

Տես ձեռնարկի մաս 5-ը՝ պաշտպանված անձանց իրավունքներին ծանոթանալու համար:

■ CNDA-ը հաստատում է OFPRA-ի որոշումը՝ մերժել ապաստանի Ձեր դիմումը (փախստականի կարգավիճակ և օժանդակ պաշտպանություն):

3.2.7. Ապաստանի գործընթացի ավարտը

Երկու ամսվա ընթացքում Դուք կարող եք բողոքարկել CNDA-ի որոշումը Բարձրագույն Դատարանում: Այն, սակայն, չի վերաքննի Ձեր ամբողջ փաթեթը: Կքննի միայն որոշ օրենսդրական կողմեր: Դա երկարատև և ծախսատար գործընթաց է, որի համար Ձեզ հարկավոր կլինի փաստաբան (կարող եք օրենսդրական աջակցություն խնդրել):

Այն թույլ չի տա Ձեզ երկարաձգել ժամանակավոր բնակության թույլտվությունը և չի ազատի Ձեզ Ձեր երկիր ետ վերադառնալուց: Պետք է որևէ միության կամ փաստաբանի հետ կապվեք՝ խորհուրդ հարցնելու:

Կարող եք նաև երկու ամսվա ընթացքում բողոքարկում ներկայացնել CNDA՝ ընթացակարգի սխալն ուղղելու համար այն և միայն այն դեպքում, եթե որոշումը ընթացակարգի սխալ է պարունակում, որը թույլ է տրվել CNDA-ի կողմից և որն ազդել է որոշման վրա: Կապվեք որևէ միության կամ փաստաբանի հետ և խորհուրդ հարցրեք:

➤ CNDA-ի կողմից ապաստանի Ձեր դիմումի մերժումը դադարեցնում է եռամսյա "récépissé"-ի վավերականությունը:

Ոստիկանությունը նամակ կուղարկի՝ տեղեկացնելով, որ Ձեր բնակության ժամանակահատվածն ավարտվել է, և կպահանջի, որ լքեք Ֆրանսիան մեկ ամսվա ընթացքում (սա OQTF-ն է):

Կարող եք արտաքսման այս հրամանը կասկածի տակ առնել մինչև այդ մեկամսյա վերջնաժամկետը: Հնարավոր է, որ Ձեզ օգնություն ցույց

տրվի՝ կամավոր կերպով ետ վերադառնալու ծննդավայր, որի դեպքում պետք է կապվեք *Office français de l'immigration et de l'intégration*-ի հետ (OFII – Ներգաղթի և Ինտեգրման Ֆրանսիական Գրասենյակ, նախկինում հայտնի որպես ANAEM):

Կամավոր վերադարձի օգնության ծրագիրը ներառում է Ձեր մեկնումը նախապատրաստելու գործում ֆինանսական և վարչական օգնությունը (տոմսերը դեպի Ձեր ծննդավայր, անհրաժեշտ ճանապարհորդական փաստաթղթերի ձեռքբերումը, բանկային հաշիվները փակելը և այլն): Ֆինանսական օգնությունը վճարվում է երեք մասով (€2,000 յուրաքանչյուր չափահասի, €3,500 յուրաքանչյուր ամուսնացած զույգի, €1,000 յուրաքանչյուր անչափահասի՝ համար առաջին երեք երեխաների դեպքում և €500 մնացած երեխաների համար), ինչպես նաև Ձեր ծննդավայրում վերամիավորման օգնության տեսքով:

Եթե մինչև արտաքսման մեկամսյա վերջնաժամկետի ավարտը չլքեք Ֆրանսիայի տարածքը կամ դիմեք կամավոր վերադարձի ծրագրին, Դուք կհամարվեք անօրինական ներգաղթած և Ոստիկանությունը կարող է գործարկել արտաքսման հրամանը: Ձեզ կարող են նաև տեղափոխել ազատագրկման կենտրոն՝ որպես արտաքսման գործընթացի բաղկացուցիչ մաս:

👉 OQTF-ը կարող է կասկածի տակ առնվել մեկ ամսվա ընթացքում նախքան վարչական դատը:

Վարչական դատարանը կարող է լսումն անցկացնել երեք ամսվա ընթացքում, եթե Ձեզ չեն տեղափոխել ազատագրկման կենտրոն: Այդ դեպքում դատարանը որոշում կկայացնի 72 ժամվա ընթացքում:

👉 Արտաքսման հրամանի մյուս տեսակը՝ APRF-ը, կարող է կասկածի տակ առնվել 48 ժամվա ընթացքում՝ նախքան վարչական դատը: Դատարանը որոշում է կայացնում 72 ժամվա ընթացքում:

4— Ապաստան փնտրողների սոցիալական նպաստները

Սոցիալական նպաստները ներառում են բնակատեղին, ֆինանսական օգնության և առողջապահության հնարավորությունները: Պետության կողմից ֆինանսավորվող այս նպաստները տարբերվում են՝ կախված անձի վարչական կացությունից: Պետք է անձնական հասցե ունենալ կամ օգտագործեք միության հասցեն՝ որպես հաստատուն հասցե, էթե ցանկանում եք ստանալ ATA (*Allocation temporaire d'attente* - ժամանակավոր օգնության թոշակ) կամ CMU (*couverture maladie universelle* - ընդհանուր առողջապահական ծախսերի հատուցում) կամ ցանկանում եք բանկային հաշիվ բացել: Լիոնի տարածաշրջանում Forum Réfugiés-ը, որոշակի պայմաններ բավարարելու դեպքում և Ձեր իրավիճակը գնահատելուց հետո, կարող է հանդես գալ որպես Ձեր հաստատուն հասցեն:

● 4.1. Բնակատեղի

4.1.1. Բնակատեղի ընդունելության կենտրոնում

Ֆրանսիայում գործում է ընդունելության համակարգ՝ իր կենտրոններով ամբողջ երկրի տարածքում: Դրանք հասանելի են միայն նրանց համար, ովքեր դիմել են ապաստան ստանալու և իրենց դիմումի հիման վրա ստացել են բնակության թույլտվություն:

Ապաստանի Ձեր դիմումի առաջընթացից կախված՝ Ձեզ բնակատեղի կտրամադրվի ընդունելության կենտրոնների երկու տեսակներից մեկում՝

- Անցումային կենտրոններ՝ Ֆրանսիայում գոյություն ունեն երկու այդպիսի կենտրոններ (Լիոն և Կրետեյ)

Այս կենտրոնները ապաստան փնտրողների համար են, ովքեր դիմել են պաշտպանություն ստանալու: Այնտեղ մնալու տևողությունը սահմանափակ է՝ մինչև երկու շաբաթ, որից հետո տեղափոխում են CADA կենտրոն կամ Ֆրանսիայի ամբողջ տարածքում որևէ այլ տեղ:

CADA (ապաստան փնտրողների ընդունելության կենտրոններ)՝ այս կենտրոնները նախատեսված են մեկամսյա APS կամ եռամսյա “*récépissé*” ունեցողների համար: Բնակատեղին հատկացվում է դիմումի գործընթացի ժամանակահատվածի համար: Եթե ապաստանի

Ձեր դիմումը մերժվում է CNDA-ի կողմից, պետք է 1 ամսվա ընթացքում լքեք կենտրոնը:

Չ Երբ առաջին անգամ գնաք Ոստիկանություն, Ձեզ բնակատեղի կառաջարկեն: Եթե մերժեք այս առաջարկը, ATA-ի (*allocation temporaire d'attente*) համար պայմանունակ չեք լինի:

Ընդհանրապես, բնակատեղի Ձեր դիմումը կատարվում է ապաստան փնտրողների ընդունելության սկզբունքով կամ OFII-ի կողմից և ընդունելությունը հաստատում է Ոստիկանությունը՝ խորհրդակցելուց հետո:

Այնուհետև հանձնաժողովը որոշում է կայացնում բնակատեղիների կենտրոններում ընդունելության վերաբերյալ՝ ամբողջ Ֆրանսիայի տարածքում ազատ տեղերի հիման վրա:

Չ Ղեռք է տեղյակ լինեք, որ առաջարկված բնակատեղին կարող է այն *département-ում տեղակայված չլինել, որտեղ դիմել էք ապաստան ստանալու:*

Չ Եթե մերժեք առաջարկը, Դուք այլևս մեկ այլ բնակատեղի առաջարկ չեք ստանա և կկորցնեք ATA-ի դիմելու իրավունքը:

Եթե բնակատեղի ստանաք CADA-ում, կարող եք ստանալ վարչական օգնություն (ապաստանի դիմելու աջակցություն), սոցիալական օգնություն (առողջապահություն, երեխաների կրթություն) և ապրելու ամսական թոշակ: Եթե բնակատեղի ստանաք CADA-ում, չեք կարող դիմել ATA ստանալու: Այս համակարգը ֆինանսավորում է Ֆրանսիայի կառավարությունը և որպես կանոն ղեկավարում են միությունները:

4.1.2. Շտապ օգնության բնակատեղի

Հնարավոր է, որ Ձեզ տեղավորեն շտապ օգնության ընդունելության կենտրոններում: Այս կենտրոնները կարող են ընդունել Ձեզ միայն գիշերները և սովորաբար ուտելիքներ չեն մատուցում: Կենտրոնից կախված՝ բնակատեղի տրամադրելու ժամկետը կարող է տարբեր լինել, սակայն միշտ կարճ է, մի քանի օրից ոչ ավել:

Գործում է Անվճար հեռախոսահամար, 115, որով կարող եք ցանկացած ժամանակ զանգահարել ցանկացած հեռախոսային տաղավարից: Եթե թողնեք Ձեր անուն և գտնվելու վայրը, Ձեզ բնակատեղի կտրամադրեն շտապ օգնության ընդունելության կենտրոնում այդ գիշերվա համար՝ կախված ազատ տեղերի առկայությունից: Այս հեռախոսահամարը հաճախ զբաղված է լինում, այդ պատճառով ստիպված կլինեք մի քանի անգամ փորձել, մինչև կարողանաք կապվել:

4.1.3. Բնակատեղերի այլ տեսակներ

Ձեր գտնվելու վայրից կախված՝ կարող են լինել բնակատեղերի այլ տեսակներ, որոնք նկարագրված չեն այս ձեռնարկում:

● 4.2. ATA (*allocation temporaire d'attente*)

Որպես ապաստան փնտրող՝ **Ձեզ թույլ չի տրվում աշխատել**: Սակայն կարող եք ժամանակավորապես մուտք գործել աշխատանքի շուկա, եթե Ձեզ ժամանակավոր բնակության թույլտվություն շնորհվի, եթե ապաստանի Ձեր դիմումը ավելի քան մեկ տարի OFTRA-ի գործընթացի մեջ է գտնվում կամ եթե CNDA բողոքարկումն ընթացքի մեջ է: Այս դեպքերում կարող եք դիմել Ոստիկանություն՝ աշխատանքի թույլտվություն ստանալու, բայց Ձեր դիմումը կարող է մերժվել՝ կախված տվյալ տարածաշրջանի կամ տվյալ սեկտորում զբաղվածության աստիճանից: Դա նշանակում է, որ չեք կարողանա զբաղվածության կենտրոնում (*pôle emploi*) գրանցված գործազուրկ անձի տվյալներին համապատասխան աշխատանք գտնել Ձեր բնակության *département*-ում:

Ապաստան փնտրողները, ովքեր բնակատեղի չեն ստացել անցումային կենտրոններում կամ CADA-ում, կարող են ստանալ ֆինանսական օգնություն, ATA (*allocation temporaire d'attente*)՝ պայմանով, որ նրանք չեն մերժել որևէ կենտրոնում բնակատեղի առաջարկ կամ այդպիսի առաջարկ չի եղել:

ATA (*allocation temporaire d'attente*) ստանալու համար պետք է դիմեք աշխատանքի կենտրոն (*pôle emploi*): Պետք է ներկայացնեք հետևյալ օժանդակ փաստաթղթերը՝

- Ձեր APS-ի (ժամանակավոր բնակության թույլտվություն) կամ եռամսյա *récépissé*-ի պատճենը,
- OFPRA-ի նամակի պատճենը, որը հաստատում է Ձեր ապաստանի դիմումի գրանցումը,
- Փաստաթուղթ, որը հավաստում է, որ Դուք օգնության որևէ այլ միջոց չունեք կամ որ պետական սոցիալական ծառայությունների կողմից բնակատեղի չեք ստացել:
- Ձեր փաստացի հասցեի ապացույցը,
- Բանկային հաշվի տվյալներ (*RIB*),

• Այն ապաստան փնտրողները, ում բնակության թույլտվություն չի շնորհվել և նրանց փաթեթն անցնում է արագացված ընթացակարգով, որովհետև նրանք ապահով երկրի քաղաքացի են, կարող են դիմել ATA ստանալու իրենց OFPRA գործընթացի ժամանակ: Ինչպես և բոլոր ապաստան խնդրողները, աշխատանքային կենտրոն պետք է ներկայանեն նույն օժանդակ փաստաթղթերը, ինչպես նաև այն որոշման պատճենը, որով նրանց գործը անցել է արագացված ընթացակարգի՝ APS-ի փոխարեն:

2009թ.-ին օրեկան ATA թոշակը կազմում էր €10.54 (այսինքն՝ €316.20 30-օրյա ամսվա համար): Ապաստանի դիմելու գործընթացի ժամանակահատվածում թոշակը վճարվում է յուրաքանչյուր չափահասի համար: Սակայն եթե OFPRA-ն կամ CNDA-ը մերժում են Ձեր դիմումը (և դրան չի հետևում բողոքարկումը), թոշակի վճարումը դադարեցվում է:

Պետք է նաև իմանաք, որ վճարումների վեց ամիսը լրանալուն պես, հարկավոր է Ձեր եկամտի մասին տեղեկացնել աշխատանքի կենտրոնին, որպեսզի թոշակի վճարումը հնարավոր լինի երկարաձգել: Եթե տեղյակ չպահեք, վճարումները կարող են դադարեցվել:

▶ NB: Եթե Ձեզ փախստականի կարգավիճակ է շնորհվում OFPRA-ի կամ CNDA-ի կողմից, բնակության Ձեր թույլտվությունը թույլ է տալիս Ձեզ աշխատել և ունենալ նույն իրավունքները, ինչ որ ազգությամբ ֆրանսիացիները՝ բացառությամբ քաղաքացիական իրավունքները: Ժամանակավոր բնակության թույլտվությունը նաև թույլ է տալիս ստանալ օժանդակ պաշտպանություն, ինչպես նաև աշխատելու իրավունք:

● **4.3. CMU (*couverture maladie universelle*) ընդհանուր առողջապահական ծախսերի հատուցում**

Որպես ապաստան փնտրող և կախված Ձեր եկամտի աղբյուրներից, **հնարավոր է, որ պայմանունակ լինեք CMU-ի՝ (*Couverture Maladie Universelle*) ընդհանուր առողջապահական ծախսերի հատուցման համար:** Այս հատուցումը հասանելի է ապաստանի դիմումի գործընթացի հենց սկզբից՝ **Ոստիկանությունում Ձեզ տրված կանչը, APS-ը կամ “*récépissé*”-ը, ինչպես նաև բնակության թույլտվության ապացույցը** ներկայացնելուց հետո: CMU-ն ունի երկու բաղկացուցիչ մաս՝ հիմնական հատուցում և լրացուցիչ հատուցում, որը ներառում է Ձեր, Ձեր կնոջ և դեռահաս երեխայի վրա կատարած բոլոր բժշկական և հիվանդանոցային ծախսերը: Եթե Ձեր ընտանիքի անդամների վերաբերյալ քաղաքացիական որևէ փաստաթուղթ չունեք, ստիպված կլինեք ներկայացնել երդման հայտարարություն: Կարգը նույնն է, երբ օգնության որևէ աղբյուրի բացակայությունն ապացուցող փաստաթուղթ չունեք:

CMU նպաստ ստանալու համար պետք է **դիմեք Ձեր բնակության վայրի առողջապահական ծառայություններին (CPAM)** կամ որոշ միություններին: Հենց որ Ձեր դիմումը գրանցվի, Ձեզ կտրամադրեն հիմնական հատուցման հավաստագիր: Այնուհետև կտրամադրվի միավյա հավաստագիր, որը կտա լրացուցիչ CMU հատուցման իրավունք (*complémentaire*), ինչպես նաև ժամանակավոր գրանցման համար: Չմոռանաք այս լրացուցիչ հատուցման նորացում խնդրել՝ ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ: Եթե Ձեզ փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն շնորհվի, կտրվի նաև մշտական գրանցման և առողջապահական քարտի (*carte vitale*) համար:

▶ **Ձեզ իրավունք է տրվում ստանալ հիմնական CMU՝ սկսած Ձեր դիմումի ամսաթվից, այն դեպքում, երբ լրացուցիչ CMU-ի (*complémentaire*) իրավունքները ուժի մեջ են մտնում դիմումին հաջորդող ամսվա առաջին օրվանից սկսած:**

▶ **Օրինակ՝ եթե դիմել եք սեպտեմբերի 15-ին, հիմնական CMU-ի իրավունքներ եք ձեռք բերում սկսած սեպտեմբերի 15-ից, սակայն լրացուցիչ CMU-ն ուժի մեջ կմտնի միայն հոկտեմբերի 1-ից:**

▶ **CMU ստանալուց առաջ կարող եք գնալ PASS առողջապահական կենտրոն (*Permanences d'Accès aux Soins de Santé*) ունեցող**

հիվանդանոց: Կարող էք ստուգվել բժշկի մոտ, և դեղամիջոցներն անվճար կլինեն:

▶ *Որոշ միություններ առաջարկում են նաև ատամնաբուժական, աչքի և հոգեբանական բուժում նույնիսկ նրանց համար, ովքեր սոցիալական հատուցում չունեն:*

PMI մոր և մանկան կենտրոնները (protection maternelle et infantile) նույնպես կարող են առողջապահական ստուգումներ տրամադրել փոքր երեխաների համար: Ընտանիքի պլանավորման կենտրոնները (centres de planification et éducation familiale) խորհրդատվություն են մատուցում կանանց համար:

▶ *Եթե տառապում էք «երկարատև հիվանդությամբ», կարող էք օգնություն ստանալ այս հիվանդության բոլոր տեսակի բուժումների հետ կապված:*

● 4.4. AME առողջապահություն (*aide médicale de l'état*)

Եթե Ձեր դիմումը քննարկվի առաջնայնության գործընթացով, կարող էք պայմանունակ լինել AME ստանալու համար՝ պայմանով, որ Ֆրանսիայում էք գտնվում առնվազն 3 ամիս: Սա թույլ է տալիս հիվանդանոցներում և քաղաքի բժիշկների մոտ բուժում ստանալ, ինչպես նաև դեղամիջոցներ՝ դեղատներից:

Դիմեք Ձեր բնակության տարածաշրջանի CPAM կամ PASS ունեցող հիվանդանոց:

● 4.5. Երեխաների սոցիալական իրավունքներ

4.5.1. Ընտանիքներին և երեխաներին տրվող ֆինանսական օգնություն

Եթե սոցիալական ծառայությունների կողմից Ձեզ բնակատեղի չի տրվել և Ձեր եկամուտը բավարար չէ, Ձեր բնակության *département*-ի տեղական հյուպատոսարանը կամ բնակության քաղաքի սոցիալական ծառայությունները կարող են միանվագ ֆինանսական օգնություն տալ, որի հաճախականությունը և գումարը տարբերվում են՝ *département*-ից կախված:

4.5.2. Առողջապահություն

Ձեր մանուկներին կարող են զննել և բուժել PMI մոր և մանկան կենտրոնների (*Protection Maternelle et Infantile*) բժշկական անձնակազմը, մասնավորապես՝ նորածինների զննումը և պատվաստումները:

4.5.3. Կրթություն

3 տարեկանից սկսած՝ Ձեր երեխան կարող է մանկապարտեզ հաճախել, սակայն մանկապարտեզը պարտավոր չէ նրան ընդունել: Ֆրանսիայում դպրոցը պարտադիր է 6-ից 16 տարեկան երեխաների համար:

Ձեր երեխային նախապատրաստական դպրոց ընդունելու համար պետք է նրա ծագման ապացույց ներկայացնեք (Ձեր ծննդավայրի պաշտոնական մարմնի կողմից տրված ծննդյան վկայական): Եթե Ձեր ծննդավայրից բերած փաստաթղթեր չունեք, պետք է Ֆրանսիական վարչության կողմից տրված ծագումը մատնանշող փաստաթուղթ ներկայացնեք (օրինակ CMU հավաստագիր): Պետք է նաև հասցեի ապացույց ներկայացնեք և փաստաթղթեր, որոնք փաստում են, որ երեխան ստացել է բոլոր պարտադիր պատվաստումները:

Ձեր բնակության տարածաշրջանի քաղաքապետարանը կկազմակերպի դպրոց ընդունվելը: Որոշ մասնավոր դպրոցներ նախապատրաստական դասընթացներ ունեն այն երեխաների համար, ովքեր նոր են ժամանել և չեն խոսում Ֆրանսերեն: Ձեր տեղական դպրոցում կգնահատեն երեխային՝ նախքան որոշելը, թե որ դպրոցում նա պետք է ընդգրկվի:

Քոլեջների և միջնակարգ դպրոցների (*collège and lycée*) դեպքում՝ պետք է ընդգրկեք երեխային Ձեր բնակության տարածաշրջանի համապատասխան դպրոցում: Ձեր երեխայի կրթական մակարդակը ստուգելուց հետո դպրոցի տնօրենը կորոշի նրան համապատասխանող լավագույն դասարանը հենց այդ կամ մեկ այլ դպրոցում, հատկապես եթե Ձեր երեխան մասնավոր դասերի ուղղվածություն ունի:

5— Պաշտպանված անձանց իրավունքները

Եթե Ձեզ փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն է շնորհվել, կարող եք դիմել տարբեր նպաստների և ծառայությունների:

● 5.1. Պաշտպանությունը Ֆրանսիայում

Այժմ Դուք գտնվում եք Ֆրանսիայի պաշտոնական մարմինների պաշտպանության ներքո:

Այսուհետ OFPRA-ն կլինի այն վարչական պաշտոնական մարմինը, որը քաղաքացիական կարգավիճակի հավաստագրեր կտրամադրի, որոնք Դուք այլևս չեք կարող ստանալ Ձեր ծննդավայրի պաշտոնական մարմիններից:

▼ **Եթե Ձեր երկրի պաշտոնական մարմինների հետ վերստին դիվանագիտական կամ հյուպատոսական կապեր հաստատեք, OFPRA-ն կարող է դադարեցնել Ձեր պաշտպանությունը:**

Եթե օժանդակ պաշտպանություն է շնորհվել, OFPRA-ն կվերաթողարկի Ձեր քաղաքացիական կարգավիճակի հավաստագրերը, եթե գտնի, որ չեք կարող այդ հարցերով կապվել Ձեր ծննդավայրի հյուպատոսական մարմինների հետ:

● 5.2. Քաղաքացիությունը Ֆրանսիայում

■ **Որպես փախստական՝** Ձեզ տասնամյա բնակության քարտ կտրվի, որը օրենքով կարող է նորացվել: Քարտը իրավունք է տալիս ազատորեն տեղաշարժվել Ֆրանսիայի տարածքում:

OFPRA-ի կամ CNDA-ի կողմից փախստականի կարգավիճակ ստանալուն պես՝ պետք է ներկայանաք Ոստիկանություն, որը Ձեզ կտա առաջին եռամսյա նորացման ենթակա *récépissé*-ը՝ նշելով, որ Ձեզ տրվել է փախստականի կարգավիճակ (*reconnu réfugié*): Այնուհետև պետք է ներկայացնեք OFPRA-ի կողմից թողարկված քաղաքացիական կարգավիճակի փաստաթղթերը և Ոստիկանությունը Ձեզ մեկ այլ *récépissé* կտա՝ նշելով, որ Դուք խնդրել եք բնակության առաջին թույլտվությունը (*a demandé la délivrance d'un premier titre de séjour*): Այս եռամսյա *récépissé*-ը կնորացվի մինչև Ձեր բնակության թույլտվության քարտը թողարկվի:

■ **Որպես օժանդակ օգնության շահառու՝** Դուք ժամանակավոր միամյա *“vie privée et familiale”* բնակության թույլտվության իրավունք ունեք, որը կարող է նորացվել, եթե շարունակեք բավարարել

պայմաններին: Այս թույլտվությունը իրավունք է տալիս ազատորեն տեղաշարժվել Ֆրանսիայի տարածքում:

Այս կարգավիճակի շնորհման նամակը ստանալուն պես՝ պետք է ներկայանաք Ոստիկանություն, որտեղ Ձեզ կտան **առաջին եռամսյա նորացման ենթակա *récépissé*-ը**՝ նշելով, որ բնակության թույլտվություն (*a demandé la délivrance d'un premier titre de séjour*) եք խնդրել: Այս եռամսյա *récépissé*-ը կնորացվի մինչև Ձեր բնակության թույլտվություն շնորհելը:

Պետք է դիմեք Ձեր ժամանակավոր բնակության թույլտվության նորացման համար մինչև դրա վերջնաժամկետը: Ոստիկանությունը Ձեր գործի համար դիմում է OFPRA, որտեղ կարող են մերժել Ձեր պաշտպանության նորացումը, եթե այն շնորհելու պատճառներ այլևս չկան:

➤ Ոստիկանությունը կարող է հրաժարվել տրամադրել Ձեր ժամանակավոր բնակության թույլտվությունը, եթե Ֆրանսիայի տարածքում Ձեր գտվելը վտանգ է հանդիսանում հասարակական կարգի խախտման համար: Ոստիկանությունը որոշ դեպքերում կարող է դադարեցնել Ձեր բնակության թույլտվությունը:

● 5.3. Ինտեգրվելը Ֆրանսիայում

OFII-ում (Ներգաղթի և ինտեգրման Ֆրանսիական գրասենյակ) տեղի ունեցած հարցազրույցից հետո պետք է ստորագրեք OFII-ի CAI ընդունելության և ինտեգրման պայմանագիրը (*contrat d'accueil et d'intégration*), որը ստորագրվում է նաև Ոստիկանության կողմից, որտեղ տրվել է բնակության թույլտվությունը:

Ըստ այս պայմանագրի պայմանների Դուք համաձայնում եք անցնել առաջարկված վերապատրաստման կուրսերը (մասնավորապես՝ քաղաքացիական և լեզվաբանական կուրսեր), ինչպես նաև անցնել պարտադիր բժշկական հետազոտություն:

● 5.4. Արտասահման ճանապարհորդելը

■ **Եթե Դուք փախստական եք** և ցանկանում եք ճանապարհորդել Ֆրանսիայից դուրս, կարող եք երկու տարվա ժամկետ ունեցող ճանապարհորդական փաստաթուղթ խնդրել Ոստիկանությունից:

■ **Որպես օժանդակ պաշտպանության շահառու** և եթե OFPRA-ն գտնի, որ այլևս անձնագիր ստանալու համար չէք կարող դիմել Ձեր ծննդավայրի պաշտոնական մարմիններին, կարող եք Ոստիկանությունից խնդրել **միամյա ճանապարհորդական փաստաթուղթ**:

Վ **Այս ճանապարհորդական փաստաթղթերը իրավունք չեն տալիս Ձեզ վերադառնալ Ձեր ծննդավայր: Ոչ մի դեպքում չպետք է կապվեք Ձեր ծննդավայրի դիվանագիտական կամ հյուպատոսական մարմինների հետ:**

Սակայն եթե OFPRA-ն որոշի, որ կարիք չկա վերաթողարկել քաղաքացիական կարգավիճակի հավաստագրերը, որոնք այլևս չէք կարող ստանալ Ձեր ծննդավայրի պաշտոնական մարմիններից, կարող եք պահպանել Ձեր անձնագրի բնօրինակը և դրանով ազատորեն ճանապարհորդել:

Ժամանակավոր բնակության Ձեր թույլտվության օգնությամբ կարող եք վերստին մուտք գործել Ֆրանսիայի տարածք: Երրորդ երկիր մուտք գործելը պահանջում է այդ երկրի կողմից առաջադրված օրենսդրական պարտավորությունների կատարում:

● 5.5. Մոտ ընտանիքի անդամների քաղաքացիությունը և պաշտպանությունը

■ **Եթե փախստական եք**, Ձեր կինը (եթե ամուսնացել եք նախքան փախստականի կարգավիճակ ստանալը կամ եթե ամուսնացած եք եղել դրանից առաջ առնվազը մեկ տարի և մինչ այժմ միասին եք ապրում) և երեխաները (երբ լրանում է նրանց 18 կամ 16 տարին, եթե նրանք ցանկանում են աշխատել) օրենքով նախատեսված կերպով իրավունք ունեն տասնամյա բնակության քարտերի:

Ձեր կինը և երեխաները պետք է կապվեն Ձեր տեղի Ոստիկանության հետ:

Նրանք կարող են պաշտպանություն ստանալ նաև Ֆրանսիական պաշտոնատար մարմիններից՝ OFPRA-ի միջոցով՝ համաձայն ընտանիքի միասնության սկզբունքի:

■ **Որպես օժանդակ պաշտպանության շահառու**, Ձեր կինը (եթե ամուսնացել եք նախքան պաշտպանություն ստանալը կամ եթե ամուսնացած եք եղել դրանից առաջ առնվազը մեկ տարի և մինչ այժմ

միասին եք ապրում) և երեխաները (երբ լրանում է նրանց 18 կամ 16 տարին, եթե նրանք ցանկանում են աշխատել) օրենքով նախատեսված կերպով իրավունք ունեն միամյա ժամանակավոր բնակության թույլտվության: Ձեր կինը և երեխաները պետք է կապվեն Ձեր տեղի Ոստիկանության հետ:

Ավելին, եթե Ձեր ընտանիքը դեռևս գտնվում է Ձեր ծննդավայրում, երբ Ձեզ փախստականի կարգավիճակ կամ օժանդակ պաշտպանություն է շնորհվում, կարող եք նրանց նույնպես բերել Ֆրանսիա՝ համաձայն “*rapprochement familial*” ընթացակարգի՝ կապվելով *Sous-direction de la circulation des étrangers*-ի կամ OFII-ի հետ:

Եթե ընտանիք եք կազմել պաշտպանություն ստանալուց հետո, Ձեր ընտանիքը կարող է միանալ Ձեզ Ֆրանսիայում՝ համաձայն ընտանիքի վերամիավորման (*regroupement familial*) նախագծի: Ընտանիքի վերամիավորման նախագծում ընդգրկվելը ենթադրում է տարբեր պայմանների ընդունում, այդ թվում՝ բնակության ժամանակահատվածի (18 ամիս), եկամտի և բնակարան տրամադրելու հետ կապված: Գործընթացն սկսելու համար Ձեր ամբողջական դիմումը ներկայացրեք Ձեր *département*-ի OFII ներկայացուցչություն:

● 5.6. Աշխատանքի շուկա մուտք գործելը

■ **Եթե Ձեզ տրվել է փախստականի կարգավիճակ**, Դուք ազատ մուտք կունենաք աշխատանքի շուկա՝ փախստականի կարգավիճակը (*reconnu réfugié*) հաստատող առաջին *récépissé*-ը ստանալուն պես:

■ **Որպես օժանդակ պաշտպանության շահառու**, կարող եք աշխատել՝ բնակության թույլտվության պահանջը հաստատող առաջին *récépissé*-ը ստանալուն պես (*a demandé la délivrance d'un premier titre de séjour*):

Կարող եք աշխատանքի ընդունվել ժամկետային (*Contrat à durée déterminée – CDD*) կամ անժամկետ պայմանագրով (*Contrat à durée indéterminée – CDI*):

Կարող եք գրանցվել որպես աշխատանք փնտրող, ստանալ անհատական օգնություն և նույնիսկ անցնել վերապատրաստման կուրսեր:

➤ **Որոշ մասնագիտություններ պահանջում են հատուկ որակավորում կամ կարող են ունենալ ազգային առանձնահատկություններ:**

Ֆրանսիական արտասահմանում գտնվող *département*-ի կողմից տրված բնակության քարտը իրավունք չի տալիս դրա տիրոջը աշխատել Ֆրանսիայի Մետրոպոլիտենում:

● 5.7. **Բնակտարածք ունենալու հնարավորությունը**

Եթե ապաստանի դիմելու գործընթացի ժամանակ ապրել եք CADA-ում (ապաստան փնտրողների կենտրոն), կարող եք կենտրոնում մնալ պաշտպանությունը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: Այս եռամսյա ժամանակահատվածը կարող է նորացվել մեկ անգամ՝ Ոստիկանության թույլտվությամբ:

Որպես պաշտպանված անձ՝ կարող եք OFII-ին խնդրել տեղ հատկացնել CPH-ում (ժամանակավոր բնակատեղի կենտրոն):

Ավելին, կարող եք մասնավոր սեկտորի բնակատեղի կամ սոցիալական բնակտարածք խնդրել՝ դիմելով իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին:

● 5.8. **Առողջություն**

Եթե ապաստանի դիմելու գործընթացի ժամանակ Ձեզ բնակության թույլտվություն է շնորհվել, հիմնական CMU հատուցումը (*couverture maladie universelle*) շարունակում է գործել:

Եթե ապաստանի դիմելու գործընթացի ժամանակ Ձեզ բնակության թույլտվություն չշնորհվի, պետք է դիմեք CMU ստանալու տեղի առողջապահական ծառայությունների գրասենյակում (*CPAM - caisse primaire d'assurance maladie*):

Ձեր վարչական կարգավիճակի որևէ փոփոխության վերաբերյալ պետք է տեղեկացնեք տեղի CPAM: Նմանապես, եթե վճարվող աշխատանքի եք անցնում, պետք է տեղյակ պահեք CPAM-ին, որպեսզի ընդգրկվեք աշխատողների հիմնական ապահովագրական նախագծում:

● 5.9. **Սոցիալական և ընտանիքի նպաստներ**

Որպես պաշտպանված անձ՝ կարող եք դիմել մի շարք նպաստների՝ կապվելով տեղի CAF-ի (Caisse d'allocations familiales – սոցիալական բարեկեցության գրասենյակ) կամ այլ տեղական իրավասու կազմակերպությունների հետ:

Եթե բավարարեք պայմաններին, կարող եք դիմել RSA-ի (*Revenu de Solidarité Active* – ցածր եկամտի լրացում), ընտանիքի թոշակի, բնակտարածքի նպաստի կամ անկարող չափահասների թոշակի համար:

● 5.10. Քաղաքացիություն ստանալը

■ **Եթե փախստական եք**, կարող եք դատարանի որոշման հիման վրա Ֆրանսիայի քաղաքացիություն խնդրել՝ փախստականի կարգավիճակ ստանալուն պես:

■ **Եթե օժանդակ պաշտպանության շահառու եք**, պետք է կարողանաք ապացուցել Ձեր հինգ տարվա օրինական բնակությունը Ֆրանսիայում՝ մինչև քաղաքացիության համար դիմելը:

Դիմելուց առաջ պետք է կարողանաք ապացուցել, որ ինտեգրվել եք հանրության մեջ (մասնավորապես՝ ֆրանսերեն լեզվի իմացություն) և ցուցադրել Ձեր բարոյական արժեքները:

Քաղաքացիության դիմումը պետք է ներկայացնեք Ձեր տեղի Ոստիկանություն:

6— OFPRA-ի կողմից վերանայումը

CNDA-ի կողմից ապաստանի Ձեր դիմումը մերժվելուց հետո կարող եք վերանայում խնդրել OFPRA-ում, միայն եթե նոր ապացույցներ ունեք (*élément nouveau*), այսինքն՝

- Ապացույցներ, որոնք ի հայտ են եկել CNDA-ի կողմից Ձեր դիմումը մերժելու ամսաթվից հետո կամ դրանից առաջ, բայց այդ մասին իմացել եք միայն հետո:
- Տեղեկություններ, որոնք ապացուցում են Ձեր երկիր վերադառնալու դեպքում հետապնդվելու վախը:

Կարող եք կապվել որևէ միության կամ փաստաբանի հետ՝ խորհուրդ հարցնելու համար:

Սկզբում պետք է գնաք Ոստիկանություն և APS խնդրեք: Ոստիկանությունը կքննի Ձեր APS դիմումը այնպես, ինչպես առաջին դիմումի դեպքում:

■ Ոստիկանությունը Ձեզ 15-օրյա APS է տրամադրում: Այնուհետև Դուք ունեք ութ օր՝ Ձեր դիմումը OFPRA-ում գրանցել խնդրելու համար՝ սկսած APS-ը ստանալու և OFPRA բողոքարկման դիմումը ներկայացնելու ամսաթվից: OFPRA-ն կտեղեկացնի Ձեզ իր որոշման մասին գրանցված առաքմամբ՝ ստացումը հաստատելով:

■ Ոստիկանությունը հրաժարվում է Ձեզ APS տալ և Ձեր գործը փոխանցում է արագացված ընթացակարգի, քանի որ գտնում է, որ Դուք ապահով երկրից եք կամ որ Ձեր ներկայությունը վտանգավոր է հասարակական կարգի համար կամ Ձեր դիմումը կեղծված է կամ վիրավորական:

Բոլոր այս դեպքերում Ոստիկանությունը բողոքարկման ձև կտրամադրի, որը պետք է լրացնեք և վերադարձնեք Ոստիկանություն՝ ստորագրված և տեղադրված կնքված ծրարում, 15 օրվա ընթացքում: Ոստիկանությունը չի կարող կարդալ Ձեր դիմումը/ կից փաստաթղթերը, քանի որ դրանք գաղտնի են: Ոստիկանությունը, Ձեր դիմումն ստանալուն պես, ներկայացնում է OFPRA՝ նշելով, որ այն արագացված ընթացակարգի դիմում է:

OFPRA-ն 15 օրվա ընթացքում կտեղեկացնի Ձեզ իր որոշման մասին գրանցված առաքմամբ՝ ստացումը հաստատելով:

Եթե OFPRA-ն մերժի Ձեր դիմումը, կարող եք մեկ ամսվա ընթացքում բողոքարկել CNDA-ում: Եթե Ձեր գործը փոխանցվում է արագացված ընթացակարգի, այս բողոքարկումը հնարավոր վերջինը չէ և Ձեզ կարող են արտաքսել Ձեր երկիր նախքան CNDA-ի կողմից գործի վերաբերյալ որոշում կայացնելը:

7— Օգտակար հասցեներ

● 7.1. Փարիզի տարածաշրջան (այս ցանկը սպառիչ չէ)

■ OFPRA

Փախստականների և քաղաքցիություն չունեցող անձանց պաշտպանության Ֆրանսիական գրասենյակ
201, rue Carnot / 94136 FONTENAY SOUS BOIS Cedex
Հեռ.՝ 01 58 68 10 10
Ֆաքս՝ 01 58 68 18 99

■ CNDA

Փախստականների դիմումների խորհուրդ
35, rue Cuvier / 93558 MONTREUIL SOUS BOIS Cedex
Հեռ.՝ 01 48 18 40 00
Ֆաքս՝ 01 48 18 41 97

■ UNHCR

Փախստականների՝ Միավորված ազգերի բարձրագույն պատասխանատու
9, rue Kepler / 75116 PARIS
Հեռ.՝ 01 44 43 48 58
Ֆաքս՝ 01 40 70 07 39

■ OFII

Ներգաղթի և ինտեգրման Ֆրանսիական գրասենյակ
44, rue Bague / 75015 PARIS
Հեռ.՝ 01 53 69 53 70
Ֆաքս՝ 01 53 69 53 69

■ ACAT

Քրիստոնյաների միություն՝ խոշտանգումների դեմ
7, rue Georges Lardennois / 75019 PARIS
Հեռ.՝ 01 40 40 42 43
Ֆաքս՝ 01 40 40 42 44

■ էքթ ափ

45, rue Sedaine / 75011 PARIS
Հեռ.՝ 01 48 06 13 89

Ֆաքս՝ 01 48 06 16 74

■ **Ամնեստի Ինթերնեշնլ**

76, boulevard de la Villette / 75019 PARIS

Հեռ.՝ 01 53 38 65 16

Ֆաքս՝ 01 53 38 55 00

■ **Աստիեյըն Պրիմ Լեվի**

107, avenue Parmentier / 75011 PARIS

Հեռ.՝ 01 43 14 08 50

Ֆաքս՝ 01 43 14 08 28

■ **APSR**

Փախստականներին՝ բժիշկների և բժշկական անձնակազմի
աջակցության կազմակերպություն

Hôpital Sainte Anne

1, rue Cabanis / 75014 PARIS

Հեռ.՝ 01 45 65 87 50

Ֆաքս՝ 01 53 80 28 19

■ **CAEIR**

Փախստական մտավորականների հատուկ օգնության հանձնաժողով

43, rue Cambronne / 75015 PARIS

Հեռ.՝ 01 43 06 93 02

Ֆաքս՝ 01 43 06 57 04

■ **CASP**

Բողոքականների սոցիալական օգնության կենտրոն

20, rue Santerre / 75012 PARIS

Հեռ.՝ 01 53 33 87 50

Ֆաքս՝ 01 43 44 95 33

■ **CIMADE**

Համաքրիստոնեական միասնության կազմակերպություն

64, rue Clisson / 75013 PARIS

Հեռ.՝ 01 44 18 60 50

Ֆաքս՝ 01 45 56 08 59

■ **COMEDE**

Արտաքսված անձանց բժշկական հանձնաժողով - Hôpital de Bicêtre
78, rue du Général Leclerc BP 31 / 94272 LE KREMLIN BICETRE
Հեռ.՝ 01 45 21 38 40
Ֆաքս՝ 01 45 21 38 41

■ **Croix Rouge Française**

Ֆրանսիական Կարմիր Խաչ
1, place Henry Dunant / 75008 PARIS
Հեռ.՝ 01 44 43 11 00
Ֆաքս՝ 01 44 43 11 69

■ **FASTI**

Ներգաղթող աշխատողների աջակցության միությունների ֆեդերացիա
58, rue des Amandiers / 75020 PARIS
Հեռ.՝ 01 58 53 58 53
Ֆաքս՝ 01 58 53 58 43

■ **FTDA**

France terre d'asile (Ֆրանսիայում ապաստանի կազմակերպություն)
25, rue Ganneron / 75018 PARIS
Հեռ.՝ 01 53 04 39 99
Ֆաքս՝ 01 53 04 02 40

■ **GAS**

Ընդունելության և միության խումբ
17, place Maurice Thorez / 94800 VILLEJUIF
Հեռ.՝ 01 42 11 07 95
Ֆաքս՝ 01 42 11 09 91

■ **GISTI**

Ներգաղթողների տեղեկացնող և աջակցող խմբակցություն
3, villa Marcès / 75011 PARIS
Հեռ.՝ 01 43 14 60 66
Ֆաքս՝ 01 43 14 60 69

■ **LDH**

Մարդու իրավունքների լիգա
138, rue Marcadet / 75018 PARIS
Հեռ.՝ 01 56 55 51 00

Ֆաքս՝ 01 56 55 51 21

■ **MRAP**

Ռասիզմի դեմ և ազգերի միջև բարեկամության շարժում

43, boulevard Magenta / 75010 PARIS

Հեռ.՝ 01 53 38 99 99

Ֆաքս՝ 01 40 40 90 98

■ **Secours Catholique**

23, boulevard de la Commanderie / 75019 PARIS

Հեռ.՝ 01 48 39 10 92

Ֆաքս՝ 01 48 33 79 70

■ **SNPM**

Գաղթողներին կաթոլիկ օգնության կազմակերպություն

269 bis, rue du Faubourg St Antoine / 75011 PARIS

Հեռ.՝ 01 43 72 47 21

Ֆաքս՝ 01 46 59 04 89

■ **Sous-direction de la circulation des étrangers**

11 rue de la Maison blanche / BP103

44036 Nantes cedex 01

Հեռ.՝ 08 26 08 06 04

● 7.2. Լիոնի տարածաշրջան

Այլ *départements*-ի կազմակերպությունների ցանկը կարող եք ձեռք բերել Ձեր տեղական Ոստիկանությունից:

■ Préfecture du Rhône

Օտարերկրացիների բաժանմունք
14, quai Général Sarrail / 69006 Lyon
Հեռ.՝ 04 72 61 67 06
Tram T1 - arrêt Saxe-Préfecture

■ Préfecture du Rhône - Service asile

12, rue des Cuirassiers / 69003 Lyon
Հեռ.՝ 04 72 61 68 59 ou 04 72 61 68 65
Մետրոյի գիծ B – Կայարան՝ Part-Dieu
կամ Tram T1 – Station: Part-Dieu Servient

— Ապաստան փնտրողների աջակցության կազմակերպություններ

(Վարչական, սոցիալական և օրենսդրական օգնություն)

■ Forum réfugiés – Ընդունելության և խորհրդատվության ծառայություն

(Բնակատեղի և անհրաժեշտ պարագաների տրամադրում, օգնություն ապաստանի դիմումը նախապատրաստելիս, առողջապահական և սոցիալական նպաստներ, CMU, AME):
326, rue Garibaldi / 69007 Lyon
Հեռ.՝ 04 72 77 68 02
Մետրոյի գիծ D – Կայարան՝ Garibaldi

■ Entretemps - Le Mail

Շտապ օգնության բնակատեղի
Centre d'échange de Perrache
Հեռ.՝ 04 78 42 24 28
Մետրոյի գիծ A – Կայարան՝ Perrache

■ Secours Catholique

(OFPPRA և CNDA ապաստանի դիմումի հետ կապված օգնություն)
12, rue Montbrillant / 69003 Lyon
Հեռ.՝ 04 72 33 38 38
Մետրոյի գիծ D – Կայարան՝ Monplaisir Lumière

— Օրենսդրական և վարչական օգնություն

■ CIMADE (Ներգաղթի վերաբերյալ անվճար օրենսդրական խորհրդատվություն)

Երեքշաբթի (2pm-4.30pm) / Չորեքշաբթի (9am-12pm) / Ուրբաթ (9am-12pm)

33, rue Imbert Colomès / 69001 Lyon

Հեռ.՝ 04 78 28 47 89 (տեղեկությունների և հանդիպում նշանակելու համար)

Մետրոյի գիծ C – Կայարան՝ Croix Paquet

■ Croix Rouge française - Service réfugiés

Ֆրանսիական Կարմիր Խաչ – Փախստականների բաժին

Երկուշաբթի (2.30-5pm) / Երեքշաբթի (9.15-11.30am) / Ուրբաթ (9.15-11.30 am)

61, rue de Créqui / 69006 Lyon

Հեռ.՝ 04 72 43 59 09

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Foch

— Վարչական գործընթացներ

■ Ներգաղթի և ինտեգրման Ֆրանսիական գրասենյակ (OFII)

7, rue Quivogne / 69002 Lyon

Հեռ.՝ 04 72 77 15 40

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Perrache

■ Pôle Emploi (Աշխատանքի տեղավորման կենտրոններ՝ կախված Ձեր բնակության վայրից)

Lyon South (7-րդ և 8-րդ թաղամասերում ապրողների համար (*arrondissements*))

63, rue Bollier / 69007 LYON

Հեռ.՝ 39 49

— Այլ օգնություն

(Ցերեկային կենտրոն, շտապ օգնություն, սնունդ, հագուստ, ավտոբուսի տոմսեր)

■ **Antenne solidarité Lyon 7e**

Լիոնի 7-րդ թաղամասի միասնության կենտրոն

40, rue Bancel / 69007 Lyon

Հեռ.՝ 04 72 76 32 50

Մետրոյի գիծ B – Կայարան՝ Jean Macé

■ **Antenne Solidarité Lyon 2e**

Լիոնի 2-րդ թաղամասի միասնության կենտրոն

16, rue Franklin / 69002 Lyon

Հեռ.՝ 04 78 42 03 52

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Ampère Victor Hugo

■ **Croix Rouge française**

Ֆրանսիական Կարմիր Խաչ

(Ընտանիքների, մեկ ծնող ունեցող ընտանիքների, հղի կանանց, զույգերի համար: Ապաստան փնտրողների կամ նրանց համար, ովքեր առողջության խնդիրների հիման վրա են փաստաթղթեր պահանջում: Սնունդ, հագուստ, Ֆրանսերենի դասեր, օգնություն մանուկներին, հասարակական տրանսպորտի անցագրեր):

Երկուշաբթի (2.30-5pm) / Երեքշաբթի (9.15-11.30am) / Ուրբաթ (9.15-11.30am)

61, rue de Créqui / 69006 Lyon

Հեռ.՝ 04 72 43 59 09

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Foch

■ **Entraide Protestante**

(Սնունդ, հագուստ, հասարակական տրանսպորտի անցագրեր)

Երկուշաբթի (2-5pm) / Հինգշաբթի (9am-12pm)

336, rue André Philip / 69007 Lyon

Հեռ.՝ 04 72 71 00 31

Մետրոյի գիծ D – Կայարան՝ Garibaldi

■ **Péniche Accueil « Le Balajo »**

Le Balajo ընդունող բեռնանավ

(Ցերեկային կենտրոն, ցնցուղ, վարսահարդարում, առողջապահական ծառայություններ)

Երկուշաբթիից Ուրբաթ 2-5.30pm

Opposite 37, quai Gailleton / 69002 Lyon

Հեռ.՝ 04 72 41 72 45

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Ampère Victor Hugo

■ **Relais SOS** (25 տարեկանից բարձր չամուսնացածների համար)

(Ցերեկային կենտրոն, ուտելիքներ, ցնցուղ և վագրի մեքենասարքավորումներ)

Երկուշաբթիից Ուրբաթ 7am-4.30pm

90, rue Marius Berliet / 69008 Lyon

Հեռ.՝ 04 78 76 35 48

Ավտոբուս 23 - Կանգառ՝

Agnan / Տրամվայ T2 – Կանգառ՝ Villon

■ **Restaurants du coeur**

(Մունդ և մանուկների կենտրոններ)

20-22, Rue St Michel / 69007 Lyon

Հեռ.՝ 04 78 58 97 29

■ **Secours Populaire** (սունդ)

Հանդիպում նշանակեք հեռախոսով Երկուշաբթի օրերը կեսօրից հետո կամ Չորեքշաբթի օրերը առավոտյան

6, rue Gaspard André / 69002 Lyon

Հեռ.՝ 04 72 77 87 77

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Bellecour

— Շտապ օգնության բնակատեղի

Զանգահարեք 115 ցանկացած հեռախոսային տաղավարից

Ամուսին չունեցող կանայք

■ **Armée du Salut**

Փրկության բանակ

131, avenue Thiers / 69006 Lyon

Հեռ.՝ 04 78 52 60 80

Մետրոյի գիծ A և B – Կայարան՝ Charpennes

Տրամվայ T1 – կանգառ՝ Charpennes

■ **Point Nuit**

69, rue de Cuire / 69004 Lyon

Հեռ.՝ 04 78 29 87 45

Մետրոյի գիծ C – Կայարան՝ Hénon

Կին չունեցող տղամարդիկ

■ **Foyer Notre Dame des Sans Abri**

3, rue du Père Chevrier / 69007 Lyon

Հեռ.՝ 04 72 76 73 53

85, rue Sébastien Gryphe / 69007 Lyon

Հեռ.՝ 04 37 37 49 68

Մետրոյի գիծ D – Կայարան՝ Guillotière

— **Համայնքային բաղնիքներ և ցնցուղներ**

(Ուղեգիր *antennes solidarité* կողմից)

4, impasse Flesselles / 69001 Lyon

Հեռ.՝ 04 78 28 28 03

13, rue Benjamin Delessert / 69007 Lyon

Հեռ.՝ 04 78 72 69 01

— **Առողջապահական ծառայություններ**

■ **CPAM առողջապահական ծառայություններ**

(Կախված Ձեր բնակության վայրից)

CMU իրավունքներ

69907 Lyon Cedex 20

■ **Dispensaire général de Lyon**

Անվճար դեղամիջոցների բաժանման Լիոնի գլխավոր դեղատուն

10, rue de Sévigné / 69003 LYON

Հեռ.՝ 04 78 14 14 14

■ **France Humanitaire**

(Ստամբուլի Կարմիր խաչի կենտրոնի հանդիպումներ)

22, quai Gailleton / 69002 Lyon

Հեռ.՝ 04 78 37 17 42

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Bellecour

■ **Hôpital Edouard Herriot**

5, place Arsonval / 69003 Lyon

Հեռ.՝ 0820 0820 69

Մետրոյի գիծ D – Կայարան՝ Grange Blanche

■ **Hôtel Dieu**

PASS (առողջապահական կենտրոն)

1, place de l'hôpital / 69002 Lyon

Հեռ.՝ 04 72 41 33 66

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Bellecour

■ **Médecins du monde**

13, rue Sainte Catherine / 69001 Lyon

Հեռ.՝ 04 78 89 99 99 ou 04 78 29 59 14

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Hôtel de Ville

— **Փաստաթղթերի և բանավոր թարգմանություն**

■ **Inter Service Migrants Corum (ISM)**

32, cours Lafayette / 69003 Lyon

Հեռ.՝ 04 72 84 78 99

Ավտոբուս 1 - 4 - 18 - 27 – Կանգառ՝ Saxe Lafayette

— **Ֆրանսերենի դասեր**

■ **Croix Rouge française - Service réfugiés**

Ֆրանսիական Կարմիր Խաչ – Փախստականների բաժին

61, rue de Créqui / 69006 Lyon

Հեռ.՝ 04 72 43 59 09

Մետրոյի գիծ A – Կայարան՝ Foch

■ **Secours Catholique**

12, rue Montbrillant / 69003 Lyon

Հեռ.՝ 04 72 33 38 38

Մետրոյի գիծ D – Կայարան՝ Monplaisir Lumière

8— Անվտանգ երկրների ցանկ

Բենին
Բոսնիա-Հերցեգովինա
Կաբո Վերդե կղզիներ
Խորվաթիա
Վրաստան
Գանա
Հնդկաստան
Մակեդոնիա
Մադագասկար
Մալի
Մաուրիթիոս
Մոնղոլիա
Սենեգալ
Տանզանիա
Ուկրաինա

